




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

291.71

uk-57

ՀԵՌԱԿԱ

Հ Ս Խ Հ
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՌՈՒՍԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԾՐԱԴԻՐ ԸՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊՐՈՖ. ԱՆԴՐԵՆՎ
Թարգ. յեզ վերակազմեց Հ. ԳՈՐՅԱՆ

891.71

Ա-57



1934 թ.

23 APR 2014

9896/1

17 JUL 2006

19 NOV 2010

այս.

ՌՈՒՍԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐ ԱՌԱՋՔԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿ. ԻՆՍՏԻ-
ՏՈՒՏԻ ԼԵԶՎԱԳՐԱԿ. ԲԱԺՆԻ ՀԱՄԱՐ (ԸՍՏ ՈՒՍՄԱՆ
ՊԼԱՆԻ ՄՇԱԿՎՈՒՄ Ե II և III ԿՈՒՐՍԵՐՈՒՄ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անցնելով աշխատանքի, ամեն անգամ անհրաժեշտ է դնել
մեր առաջ աշխատանքի նպատակը և հասկանալ նրա ընթացքը,
թե ինչ է մեզ հարկավոր և ինչպես պիտի աշխատել:

Մենք ցանկանում ենք պարզել հեղինակի դասակարգա-
չին ուղղությունը և հասկանալ դրա արտահայտությունը նրա
ստեղծագործության բնույթի մեջ. մենք ցանկանում ենք վորո-
շել տվյալ հեղինակի տեղն իր ժամանակի դասակ. պայքարի
մեջ, նրա գրվածքների նշանակությունն անցյալում և մեզ հա-
մար:

Ի հարկե, աշխատանքի հիմքը պիտի կազմի գրվածքների
ուսումնասիրությունը, բայց դրանք հասկանալու համար անհրա-
ժեշտ է ճիշտ իմանալ տվյալ շրջանի դասակարգչին պայքարի.
ընթացքը, իմանալ պատմությունը: Հասկանալի չե, բանն այն-
չի, վորպեսզի լուրջաքանչյուր ակնարկ հեղինակի մասին, ամեն
մի գրուցը, ամեն մի դասը դպրոցում և ամեն մի պատաս-
խանք լրացվի ալպես կոչված «եպոխայի ակնարկով», բանն
այն չի, որինակ, վոր Պուշկինի մասին խոսելիս մենք հիմնա-
վորապես առանձին խոսենք կապիտալիստական հարաբերու-
թյունների զարգացման մասին, ճորտատիրական տնտեսության
սկսվող քայքայման, հացի գնի և կրիզիսի մասին, դեպի ար-
տասահման կատարած ուսական զորքի արշավանքի մասին,
Ալեքսանդր I-ի թագավորության առաջին շրջանի լիբերալիզմի
ու հետագա ռեակցիայի մասին և այլն, և այլն: Կարիք չկա ա-
ռանձին խոսել այդ մասին, բայց մենք պարտավոր ենք իմա-
նալ պատմական փաստերը և այն ել այնպես իմանալ, վորպես-
զի այդ լեքեան զա գրական ստեղծագործությունների կոնկրետ
բնութագրման ժամանակ, դրա համար կարելի չե ոգտվել Պակ-

3914 1007-
32719

42-4

բովակու «Русская история в самом старом очерке» գրքից (ավելի լավ է վերցնել վերջին հրատարակությունը): Ավելի մանրամասն ուսումնասիրելու համար պետք է վերցնել նույն հեղինակի ամբողջական կուրսը՝ «Российская история»-ն:

Այս մեզ անհրաժեշտ են կենսագրական տեղեկություններ հեղինակի մասին: Մենք չենք կարող, Պերեվերգելի նման, ժըխտել հեղինակի անհատի ակտիվ նշանակությունը և կենսագրության ուսումնասիրության նշանակությունը հենց հեղինակի և միայն հեղինակի միջոցով և գրականության մեջ կոնկրետ կերպով չեք կարող գտնել իրենց գիտելիքները: Բայց սրանից չի հետևում թե պետք է ֆետիշացնել կենսագրությունը, չի հետևում հրապուրելի բիրտգրական, մեղ հետաքրքրում է հեղինակի վոչ թե անհատականությունը, վորպես այդպիսին (մասնավորապես վոր մենք գործ ունենք անցյալի գրողների հետ) այլ սոցիալական կենսագրությունը, սոցիալական բնութագրերը:

Մասնավորապես մեզ համար կարևոր է հեղինակի ծագման հարցը. ի հարկե չպետք է ծագմանը տալ այնպիսի նշանակություն, վորպիսին տրվում է Պերեվերգելի սխեմայի մեջ, վոր իբր թե հեղինակն ինչ միջավայրում ծնվում է գրան ել ընդմիջում պատկանիլու չի, այդ և միայն այդ միջավայրն է արտացոլելու (թեև կուզ և քողարկված «գեղատաղանթ» ձևով), այդ և միայն այդ միջավայրը նա գիտե: Մենք գիտենք, վոր հասարակական առանձին գասակարգերն իրարից չեն բաժանված չինական պարզապես: Մենք գիտենք, վոր հնարավոր է անցումն ի գասակարգի գերբերից դեպի մյուսի գերբերը (այսպես Պերեվերգելյան հասկացությունը անհնար է գրողների վերադաստիարակումը, անհնար է և գրական շարժման ղեկավարությունը կուսակցության կողմից): այդպիսի անցման փալուն որինակներ են Տոլստոյը, Նեկրասովը և այլն. մենք լինթագրում ենք, վոր մի վոր է գասակարգի ներկայացուցիչը կարող է տեսնել, իմանալ և հասկանալ մյուս գասակարգերի կյանքը (մեծ կամ փոքր չափով տվյալ գասակարգի պատմական դրությունից կախված): Մեզ համար ավելի կարևոր է այն, թե վոր գասակարգի կողմն է անցնում ավելի հեղինակը, ում իրենց գիտելիքն է արտահայտում, քան այն, թե վորակից է դուրս յեկել, ում հետ է կապված իր ծագմամբ: Բայց դարձյալ կրկնում ենք, վոր մեզ համար կարևոր է նաև, թե ինչ ծագում ունի հեղինակը, քանի վոր այդ քանը կարող է վորոշ լույս սփռել վորոշի ստեղծագործության առանձին կողմերն ուսումնասիրելու վրա (այսպես Լենինն ընդգրծում է, վոր Գերցենը ծնվել է ազնվականության մեջ):

Յերբիմ հատուկ ուշադրության են առնում հեղինակի կյանքի մանկական տարիները: Անկասկած մանկական տարիներն ել ունեն վորոշ նշանակություն, հեղինակին տալով վորոշ տպավորությունների պաշար, բայց միամտություն է հատկապես այդ տպավորություններով բացատրել գրողի ստեղծագործության զարգացումը և մենք չգուշացնում ենք այդպիսի սխալից: Յերբ, որինակ խոսում են Տուրգենևի մոր դաժանություն կամ Նեկրասովի դաժան հոր մասին և այդ գրողների մանկության ժամանակ դիտած ճորտական ճնշման պատկերներով են բացատրում «Записки охотника»-ի և Նեկրասովի գրվածքների հակաճորտատիրական (իհարկե տարբեր չափի) բնույթը, ապա կարելի չի հարցնել, միթե հազվագեպ ելին ճորտական ճնշման պատկերները: Չե վոր համարյա բոլոր ազնվական յերեխաներն ել տեսնում ելին այդպիսի պատկերներ, մինչդեռ շատերն որդեք նրանցից դուրս չեկան Տուրգենևիներ և առանձնապես Նեկրասովիներ: Յեվ բնորոշ է, վոր վոչ Տուրգենևիվը և վոչ Նեկրասովը չեն սկսել այնպիսի գրվածքներից, վորոնց մեջ արտահայտվել նրանց թշնամանքը դեպի ճորտատիրական իրավունքն ու կարգը, այլ միայն ժամանակի ընթացքում են չեկել այդպիսի գրվածքների: Ուստի չժխտելով հեղինակի մանկական տարիները և վոչ դաստիարակության վորոշ նշանակությունը, չպետք է այդ փաստերին տալ չափազանց մեծ նշանակություն:

Ավելի կարևոր է մեզ համար գրողի իդեոլոգիական ձևակերպման պրոցեսը—նրա պատանեկական տարիներն ու անցումն դեպի հասուն շրջանը: Ուսուցումն ծարսկոսելու լիցելում և համարաբանում, մոտիկություն դեկարրիստների կամ պետաշեցիներին հետ և այլն, այդ բոլորը ելական փաստեր են: Գրողի դիրքը հասարակության մեջ, նրա պաշարը կյանքի համար, կապերն ու ընդհարումները շրջապատողների հետ, գրող լինելու փաստերը նրա կյանքում—(պրոֆեսիոնալ թե սիրող), այդ ամենը պետք է հաշվի առնվեն մեր կողմից:

Հատկապես կարևոր է, ի հարկե, այն ինչը բնութագրում է հեղինակի իդեոլոգիան: Այս տեսակետից մեզ համար արժեքավոր են ժամանակակիցների հիշողությունները և որագրերը և իր, հեղինակի նամակները և նրա հոգվածները՝ գիտական, հրապարասական քննադատական բնույթի: Յեվ այս խնդրում մենք վճռականորեն տարաձայնվում ենք Պերեվերգելի հետ, վոր զեն է նկատում «արտադրական» վորջ մատերիալը և ձգտում է «խոսքով» հիմնվել միայն գրական տեքստի անալիզի վրա:

Մեմուարները, նամակները, հոդվածները մեզ թույլ են տալիս, գլուխը թաքցնելով ի հայտ բերել զրոյի իդեոլոգիան և կազմել աշխատանքի հիպոթեզ, վորը մենք հետո ստուգում և ճշտում ենք գրական մատերիալի վերլուծմամբ:

Պարզ է, վոր գրական մատերիալի անալիզն ել պիտք երևնի աշխատանքի կենտրոնական տեղը, պատմական, կենսագրական և այլն տվյալները նախապատրաստում են մեզ այդպիսի անալիզի համար: Գրողի իդեոլոգիան մենք պիտք երբայց նրա գեղարվեստական ստեղծագործությունից մեջ և այն ել վոչ թե այդ ստեղծագործությունից արտաքինացված «բովանդակություն» մեջ այլ ամբողջ բնույթի մեջ: Դրա համար կարելի չի ղեկավարվել հետևյալ հարցերով (բայց դրանք շարունակ մեծ ազդեցություն ունենում են նրա իդեոլոգիայի, ինչն էլ համար, ինչն էլ գեղեցիկ և կոմուն տվյալ գրողը, վորոնք են նրա իդեոլոգիան, ինչն է նա դատապարտում և ինչպես է նա յերևան բերում իր համակրանքն ու հակակրանքն իր ստեղծագործությունից ամբողջ բնույթով:

Այստեղ ի հարկի, հետևում է մեծ ուշադրություն դարձնել գրվածքների թեմատիկային, կյանքի ինչպիսի սփերաներ, ե պատկերում հեղինակը, ինչպիսի միջավայր, ինչպիսի խնդիրներ են դնում, ինչով է հետաքրքրվում, այս ամենը չափազանց կարևոր են: Բանն իհարկի չի հանգում նրան, վորպեսզի գրվածքների մեջ փնտրվի գրողի անմիջական քաղաքական կամ սոցիալական աշխարհայացքը: Մեզ մոտ, որինակ Պուշկինի իդեոլոգիան բնութագրելու համար սահմանափակվում են սովորաբար նրա քաղաքական վոտանավորներով: Մինչդեռ հարցն ավելի լայն է. գրողը կարող է վոչինչ չասել վոչ քաղաքականության, վոչ ճորտական իրավունքի մասին և այլն. նա կարող է «յերգել» միայն սիրո և բնության մասին և դրս մեջ յերևան դա նրա գաղափարային գիրքավորումը: Մեր խնդիրն այն է, վորպեսզի ցույց տանք, թե ինչպիսի թեմաներ են հատկապես գերակշռում գրողի ստեղծագործության մեջ, ինչպես է, այսպես ասած, առանձին թեմաների և խնդիրների տեսակարար կշիռը նրա ստեղծագործությունից մեջ: Այդ պլանով, որինակ, ղեկավար թե նպատակահարմար է «Евгений Олегин» ռոմանի ելույթունը տեսնել «Հին կուրի լուծ» (ямо) և «Թեթի հարկ» խոսքերի մեջ. համապատասխան յերկու տողերը կարող ելին չլինել բոլորովին ռոմանում և վոչվոք այդ չնկատեր (և սովորաբար չեն ել նկատում ընթերցողները, բացառությամբ մասնագետների): Անհրաժեշտ է տարբերել կարևորը (տվյալ գրվածքի համար) չեկրոնդականից՝ նրա թեմատիկ մատերիալի մեջ, Համենայն դեպս անհրաժեշտ է

բնութագրել զրոյի թեմատիկան ընդհանուր առմամբ. խոսում ե արդյոք հեղինակը բացառապես բնության կամ կենցաղի մասին, զբաղվում ե արդյոք նա շահագործման մեխանիկայով կամ նուրբ ու փափուկ հոգեկան վերապրումներով, պատկերում ե նա իշխող դասակարգերի ինտելիգենտ ներկայացուցիչներ կամ ճնշող դասակարգերի ներկայացուցիչներ, ձգտում ե նա արդյոք պատկերացնելու հեռավոր անցյալը կամ կենդանի արդիականությունը (և հատկապես նրա վոր կողմերը):

Չի կարելի իհարկի, սահմանափակվել պարզապես փաստը ցույց տալով. անհրաժեշտ ե բացատրել այդ փաստը և պարզել նրա նշանակությունը, նրա իմաստը, դրա համար կարևոր են միանգամայն կոնկրետ, մանրագնին գիտություններ: Հիշտ ե բացատրել Նեկրասովի գլուխացիական մոտիվները իմաստը, բայց կարամզինի պատկերած «գեղջկուհի» կիզան, որինակ պատկերում ե ավելի աշխուրջ վերլուծում: Յեկ պարզ է, վոր այստեղ ել մենք յերբեք չենք կարող «ինչի» հարցն տաանձնացնել «ինչպիսի» հարցից, Նեկրասովի գեղջկուհին («Кому на Руси жить хорошо») և կարամզինի գեղջկուհին պատկերված են զանազան կերպ:

Այսպիսով բանը վոչ թե թեմատիկայի փաստի մեջն է, այլ թեմայի զանազան լուսաբանման մեջ, դեպի մատերիալն ունեցած հեղինակի տարբեր մոտեցման մեջ: Ամեն մի գրվածքի (կամ գրվածքների խմբի) վերաբերմամբ անհրաժեշտ ե պարզել, թե ինչ խնդիր ե հետապնդում հեղինակը, ինչ իգեա չի ձգտում արտահայտել իր գրվածքով: Գտնելով այդ իգեան, մենք իվիճակի կլինենք լուսաբանել թե թեմայի բնդհանուր ընտրությունը, թե կոնկրետ այս կամ այն կողմերի, այս կամ այն մանրամասնի ընտրությունը, իվիճակի կլինենք պարզել հեղինակի վերաբերմունքը դեպի արտացոլվող աշխարհը և այստեղից բխող այդ աշխարհի լուսաբանումը, այն ինչ վոր կարելի չի կոչել գրվածքի տոն: Յեթե մենք հաստատում ենք Պուշկինի ձգտումն դեպի «ազատությունը» (մի ին ձեկով) նրա ստեղծագործությունից համարվալին շրջանում, նրա անբավականությունը կյանքի գոյություն ունեցող կարգից, ապա մենք կհասկանանք և նապրիտին (նա արտաքին մոալից աշխարհին հավերժական ազատություն ավետեց) և Բալլոնի («անհետացավ ազատություն վորդարվով») փառաբանումը և ձգտումն դեպի «ազատ» լեռնցիներն ու գնչուները և «ազատություն» վորոնող հերոսների պատկերները («Ազատություն, նա միայն քեզ վորոնեց լուսնի տակ») և ձգտումն դեպի անհղ ու մեծաշուք ազատ բնությունը, դեպի լեռներն ու ծո-

վերը («Մնաս բարով, աղստ տարերը») և հեղինակի բնորոշումն իր ստեղծագործությունների մասին («Ընդունիր ժպիտով, իմ ընկեր, ազատ մոռացի նվիրաբերությունը», «անապատի ազատություն սերմնացան»), կհասկանանք նաև կոմպոզիցիայի և վոտանավորի առմանտիկ «ազատ» բնույթը: Մենք չենք սահմանափակվի, հեռավոր, այնպիսի գրվածքով, վորպիսին «Գոշուլեն» է, այլ վերցրելով նրան լիբրիկան ընդհանրապես («УЗНАК» և այլն): Նույնպես խոսելով Տոլստոյի գաղափարական ուղղությունից մասին, չպետք է սահմանափակվել պետություն, պատերազմի, յեկեղեցու, դատաբանի: և այլնի մասին նրա անմիջական արտահայտություններով: Կարևոր է վերհանել Տոլստոյի իդեալական հիմունքները, նաև այնպիսի դեպքերում, յերբ նա խոսում է բնության (զարնան նկարագրությունը «Հարություն» մեջ), սիրո (Նեխլյուզովի և Կատյուշի պատմությունը) մասին, յերբ նա տալիս է գործող անձանց պատկերներ (գեներալի, Տոպորովի և այլն):

Կարևոր է նշել, վոր այստեղ անքակտելի կապակցվում են «բովանդակություն» ու «ձեռք»: Անհրաժեշտ է դուրսացնել համար կատարվող այն սխալից, յերբ խոսելով Գոգոլի հետադիմապարպետ է լեզվի մեջ, տալիս է բնության հրաշալի պատկերներ, կենցաղային պայմանների հրաշալի նկարագրություն, վարպետորեն տիրապետում է հումորի պրիոմներին: Անհրաժեշտ է ումեն անգամ պարզել «ձեռք և բովանդակություն» միասնությունը: Որինակ, Գոգոլի մասին պիտի ասել, վոր նա պաշտպանում է աղնավաճառատերական կառուցվածքը իդեալիզացիայի, յերգիծանքի և բարոյական քարոզի միջոցով: Իդեալիզացիան տանում է դեպի բնության հանդիսավոր և լուսաշող պատկերների ստեղծումն է, դեպի «հրաշալի» անձանց կերտումն, դեպի մետաֆորների, չափազանցությունների, համեմատությունների, եպիտետների ազատ ու փոխյուն կիրառումն: Յերգիծանքը տանում է դեպի կոմիքի պրիոմների հարուստ մշակումն, դեպի ծաղրանք կարուկության ոգտագործումն, դեպի կոմիկական անունների, խոսքի կոմիկական դարձվածքների, կոմիկական հակադրությունների և համեմատությունների կիրառումն, դեպի ռեալ համաչափությունների խախտումն և այլն: Բարոյական քարոզը յերկվան է գալիս ստեղծվող տիպերի ընդհանրացումները մեջ, նրանց հոգեբանական դատողությունների մեջ, հանդիսավոր յեկեղեցական բերվական տիպի լեզվի մեջ:

Այս պլանով պիտի առաջ տարվի ամբողջ ծրագրային մա-

տերիալի վերլուծումը: Եւրաբանչուր հեռակայնի պարսականությունն է ծանոթանալ ամբողջ կուրսին և մանրագնին մշակել մի վորևե հեղինակ կամ հեռակայնի ընտրությունը, նույնիսկ մի գրվածք (քիչ թե շատ խոշոր):

Իհարկե անհրաժեշտ է հաշվի առնել գրողի շարժումը և չլուր ընդհանրական բնութագիր այն ժամանակ, յերբ հեղինակն իր գործունեությունից տարբեր շրջաններում փոխում է յերբեմն մեծ, յերբեմն քիչ չափով (իր գիրքավորումները) օրինակ «Война и мир»-ը չի կարելի վերցնել նույն փակագծի մեջ «Հարություն» հետ, Պուշկինի «Капитанский пленник»-ը «Капитанская дочка»-ի հետ և այլն):

Չպետք է սահմանափակվել գրողի ստեղծագործությունը: Կարևոր է ծանոթանալ քննադատություն մեջ նրա գործունեության մասին յեղած գոնե գլխավոր արձագանքներին (Բիլինսոկի, Դոբրոլյուբով, Պիսարեվ և այլն): Քննադատություն արձագանքները վերցնում ենք վոչ թե վորպես ղեկավարություն գրողի մասին մեր արտահայտած դատողությունների համար, այլ վորպես դասակարգային պաշարում տվյալ գրվածքի նշանակությունը պարզող մատերիալ: Կարևոր է իմանալ թե ինչու այս կամ այն քննադատը այսպես և վոչ թե այլ կերպ է գնահատում տվյալ գրվածքը, թե ում շահերն է արտահայտում նա իր գնահատականով:

Վերջապես, ինչպես ցույց է տրված վերևում ա՛յցայի գրական փաստերի նկատմամբ ամեն անգամ պետք է պարզել թե ինչ նշանակություն ունեն մեզ համար այդ փաստերը «կուլտուրական ժառանգության» ոգտագործման, այն քննադատորեն վերամշակելու պլանի մեջ: Այս տեսակետից հեռակայնիներին շատ կարևոր է ոգտվել աշակերտների շեպի կլասիկներն ունեցած վերաբերմունքի վրա կատարած իրենց դիտողություններից: Չափազանց ոգտավետ է տանել մի շարք հարցումներ, անկետաներ և սխտեմատիկ դիտողություններ ուսանողների վրա և ալդ դիտողությունները հաղորդել սեսլաների ժամանակ: Ըստ ինքյան հասկանալի յե, վոր չպետք է սահմանափակվել «կողմնակի դիտող» դերով, անհրաժեշտ է մանկավարժի ակտիվ միջամտումն և ղեկավարությունը աշակերտների ընթերցանությունից գործում:

Կարելի է դնել մի շարք թեկուզ պարզագույն հարցեր (վորպեսզի դժվարություն չպատճառի աշակերտներին) դժբ յեկավ այս կամ այն գրվածքը, ինչպիսի յեղրակացություններ հանեց իր համար ընթերցողը, ինչպիսի յեղրակացություններ և թեկադրում հեղինակը, կարելի է նրա հետ համաձայնվել և այլն: Այսպես մշակվելու յեն կուրսի բոլոր թեմաները:

Աշխատանքի ընթացքի սքեմը կարելի չէ պատկերացնել առաջադրված:

1. Ծանոթություն պատմական տվյալների հետ:
 2. Ծանոթություն կարևորագույն կենսագրական տվյալների հետ:
 3. Պարզել հեղինակի դասակարգումը՝ զերբավորումն ուժանդակ (нодооноуш) նյութերի հիման վրա:
 4. Դիտել ստեղծագործությունը (փաստական տվյալներ՝ վորոնք են կարևորագույն գրվածքները, չերբ և ինչ պայմաններում են գրված, հիմնական բովանդակությունը):
 5. Ստեղծագործության վերլուծումը (գաղափարները, թեմաները, պատկերները, լեզուն, կոմպոզիցիան):
 6. Ստեղծագործության զարգացումը:
 7. Քննադատների վերաբերմունքը, գրողի նշանակությունն անցյալում:
 8. Հեղինակի նշանակությունը արդիականության համար: Հետադառնում, ամեն մի առանձին առաջադրություն մեջ մենք չենք կրկին ամբողջ սքեմը, այլ կանգ կառնենք միայն այն առանձնահատուկ խնդիրների վրա, վորոնք անհրաժեշտ են առաջադրել յուրաքանչյուր առանձին դեպքում:
- Ամեն անգամ չենք ձեռնարկել նույնպես առաջադրության նպատակը, վորի խնդիրն և բացահայտել տվյալ հեղինակի դասակարգումը ուղղությունը և ցույց տալ զրա արտահայտումն նրա ստեղծագործության բնույթի մեջ: Յուրաքանչյուր յուրահատուկ դեպք կատվի առաջադրություն մեջ:
- Դասընթացը կազմված է հետևյալ թեմաներից.
- I Ֆեոդալա-ճորտատիրական կարգի կազմավորման շրջանի գրականություն:
1. Գրականությունը նախքան դեկարրիստների ապստամբությունը.
 2. Պեղականության և դեկարրիստների ապստամբությունը հաջորդող ռեակցիայի շրջանում (Պուշկին, Լերմոնով, Գոգոլ, ստեղծ.):
 3. Գրականությունը 40-ական թ. թ. (Բելինսկի, Գերցեն):
- II. Այդ ժամանակից. կապիտ. հպարտի գրականություն.
1. 50-60-ական թ. թ. հեղափոխական դեմոկրատական քննադատությունը.
 2. 50-60-ական թ. թ. հեղափոխական դեմոկրատիայի գրականությունը
 3. 50-70-ական թ. թ. դեմոկրատական բեկտորիստիկան:

4. Ազնվական և բուրժ. լիբերալ գրականությունը 50-70-թվականներին. —

(Տուրգենև, Դոնսկոյ, Աստրովսկի):

5. Դոստոևսկու ստեղծագործությունը:

6. Հեղափոխ. նարոդնիկության գրականությունը:

7. Լ. Տոլստոյի ստեղծագործությունը:

8. 80-90-ական թ. թ. լիբերալ բուրժ. և մանր բուրժուազիայի գրականությունը:

Այսպիսով դասընթացը բաժանվում է 11 առաջադրությունների, տարբեր ծավալի: Մշակման հիմքում պիտի ընկնի գրական տեքստիկա ուսումնասիրությունը:

Ամեն առաջադրությունից հետո նշված է մանրամասն գրականությունը, ինկատի ունենալով դասագրքի բացակայությունը¹⁾ ցույց են տրված զանազան աղբյուրներ, վորոնց պիտի դիմի հետազոտողը: Նորից շեշտում ենք վոր աշխատանքի հիմնական մասը մնում է կատարել ինքնուրույն ձևով:

I ՖԵՈԴԱԼԱ-ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԿԱԶՄԱ-ԼՈՒԾՄԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Թեմա. գրականությունը դեկարրիստական ապստամբության նախորդին. բուրժուական հարաբերությունների զարգացումը ճորտատիրական կարգի ներսում շարունակվում է և տանում է միջազգային սխտուրացիայի բարենպաստ պայմաններում, դեպի լիբերալ տրամադրությունների աճումն ազնվականության շրջանում, վորը մասամբ մտել էր բուրժուական ներաճման ուղին: Սակայն գյուղացիության շարունակվող պայքարը ճորտատիրության դեմ սահմանափակում է ազնվական լիբերալիզմը և առաջ է բերում, ինչպես և XVIII դարում, պաշտպանողական տենդենցներ ազնվականության մեջ, վոր ձգտում է պահպանել գոյություն ունեցող կարգն իր հիմունքներով, զրա համար աշտեղն էլ մենք ունենք զարգացման վոչ թե միասնական ուղի, այլ հակասական շահերի պայքար գրականության մեջ: Շարունակվում է Դեմոկրատիկ գրական գործունեությունը՝ ազնվական շահերի ցայտուն արտահայտությամբ: Դեմոկրատիկ ուղին մա-

¹⁾ Առանձնապես վատ է դրությունը մեզ մոտ Հայաստանում, ուր ուսու կրթականության փչ բան կա քարգմանված: Մ. Թ.

սամբ (նրա կալիկութան լիբիկան) շարունակում է Բատյուշկովը: Կարամզինը հաննդս է գալիս վորպես հրապարակախոս և պատմաբան, ըստ վորում պարզ կերպով իհայտ են գալիս նրա պաշտպանողական տենդենցները, Կարամզինի հետ հրապարակ են իջնում Ժուկովսկիս, վորի գրական գործունեությունը նույնպես կրում է պանպանողական բնույթ (մի կողմից հայրենասիրական—միապետական լիբիկան և հնի իդեալականացում, մյուս կողմից՝ ընթերցողին իրականությունից հեռ հաշտեցման ձգտող սոցիալական կարգի հակասությունները մթազնադ սենտիմենտալ վոդեբեյզան լիբիկան, լերրորդ կողմից՝ ռեալ կյանքից և պաշարից հեռացնող և այդպիսով իշխող դասակարգի ձեռքին խաղալիք դարձնող ֆանտաստիկան և կրոնա-միստիկական պոեզիան): Պահպանողական բնույթ է կրում Կրիլովի ստեղծագործությունը (առակները), վորի մոտ սակայն կան տիրող կարգի մասնակի քննադատություններ, Կրիլովի գործունեությունից մեջ չերեկան է գալիս քաղաքի մանր-բուրժուազիայի անկայունությունը, նրա մերձեցումը իշխող դասակարգերին: Ազնվականության ձգտումն դեպի ճորտատիրական կարգի բուրժուական բարենորոգումը («ազատություն» ընդլայնումն, ճորտատիրական կարգի մեղմացումն, բյուրո քառական ապարատի բարեփոխումն, կուլտուրական մակարդակի բարձրացումն, պայքար «ազգային» կուլտուրայի համար), չերեկան է գալիս Գրիբայեդովի գործունեությունից մեջ վոր Զոնովիկինի և Նովիկովի գծի շարունակողն էր և հարում էր դեկաբրիզմի աջ թևին:

Անհրաժեշտ է ընդգծել Գրիբայեդովի կոմեդիայի խոշոր ռեալիստական ուժը (թեև Գրիբայեդովը պահպանեց ֆրանսական կլաասիցիզմի մի քանի առանձնահատկությունները), հենց այդ ուժի շնորհիվ կուեդիան արգելից ցարական դրաքնությունից կողմից վորպես «վտանգավոր» գրվածք: Անհրաժեշտ է նշել նաև, վոր գնելով իր պատկերների հիմքում վորոշակի մարդկանց պորտրետներ, Գրիբայեդովը կարողացավ նրանց տալ ընդհանրացնող, բնույթ և հարված հասցնել վոչ միայն իր ժամանակակից, այլև հետագայի ցարական բյուրոկրատիային և ազնվականությանը: Լեզվի սրամտությունը, սահունությունն ու կենդանությունը նըպաստեցին կոմեդիայի հաջողությունը:

Բուրժուական ուղղությունից վերակրթության համար մղվող ավելի վճռական պայքարն (չերեկան չեկած դեկաբրիստների շարժման մեջ) իր արտահայտությունն է գտնում պոետ դեկաբրիստ Ռիլևիի ստեղծագործության մեջ: Այստեղ մենք ունենք Ռադիշչևիի գծի շարունակումն, բայց անհրաժեշտ է նշել, վոր

Ռիլևիին ի տարբերություն Ռադիշչևիի, համեմատաբար սակավ է գիմում արգիականություն կոնկրետ խնդիրներին իր ստեղծագործությունից (մեջ) որինակ «Временщику», «Ах точно, мне» չերգը և մի քանի այլ գրվածքներ): հաճախ նա ողտագործում է պոտմական նյութը (խոհեր, պոեմներ)՝ «ազատությունը», «հայրենիքին» և այլին ծառայելու ուղղությամբ հեղափոխական վերացական ներքոյի ձևով:

Ինչպես վոր XVIII դարի գրականության մեջ, այնպես էլ XIX դարի առաջին քառորդի գրականության մեջ իսկական գյուղացիական շահերը չեն գտնում իրենց արտահայտությունն, այլ առավել անման չերեկան չեն գալիս անգիր ստեղծագործության մեջ (որինակ, չերգեր Արակչևիի և մյուսների մասին): Այդ շրջանի վերջում կարելի է նշել յուրաքանչյուր տեսակի շիշտ աղնրվական գրականության մեջ «տոտեսական մոեթիկ» մասին, «գյուղական բնակչի թախիծը» ներքողող գեղջկական պոեզիայի խրախուսումն (այսպես է գիտությունների ակադեմիայից պատվի կոչմամբ ու վոսկե մեդալով, իսկ թագավորից ու թագուհուց շքեղ բաճկոնով (кафтан) և վոսկե ժամացույցով պարգևատրված գյուղացի-առեվտրական Սլեպուշկինի վոտանավորի ժողովածվի վերնագիրը):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Горь от ума Грибоедова изд. 1933 г.
2. Рылеев. Временщику. Войнаровский.
3. Литературная энциклопедия т. II (Грибоедов), т. IV (Жуковской), т. V (Крылов)
4. Бунт декабристов сб. Ленинград 1926 г. статья цейтля О Рилееве
5. Մ. Գեվորգյան Գրիբայեդով (Նոր ուղի 1929 թ. № 2—3, Պետք է մոտենալ քննադատորեն, վորովհետև Գրիբայեդովին դուրս է բերում հեղափոխական:
6. Коган-История русской литературы с древнейш. времен до наших дней, стр. 44—54.

ԳՐԱՎՈՐԻԹԵՄԱ

ԳՐԻԲԱՅԵԴՈՎԸ ՅԵՎ ԴԵԿԱԲՐԻՍՏՆԵՐԸ

1. Գրիբայեդովը և ճորտատիրական կարգը.
2. Գրիբայեդովի վերաբերմունքը դեպի դեկաբրիզմը.
3. «Պեղծից պատուհաս» կոմեդիայի նշանակությունը.
4. Տիպերը, վոճը, լեզուն և կոմպոզիցիան.

Թեմա—Դեկարրիստների ապստամբութեանը հաջորդող ռեակցիայի շրջանի գրականութիւնը (Պուշկին, Լերմոնտով, Գոգոլ)։

Պուշկինի ստեղծագործութիւնն ընդգրկում է ինչպես 20-ական թ. թ. այնպես էլ 30-ական թ. թ. և այսպիսով փոխադրում է մեզ հաջորդ շրջանը. 30-ական թ. թ. ծավալվում է Լերմոնտովի ստեղծագործութիւնը. Գոգոլը մեզ տանում է դեպի 40-ական թ. թ.

Հիշյալ հեղինակների ստեղծագործութեան բնույթը պարզելու համար անհրաժեշտ է մեկնաբանել դասակարգային պայքարի հետագա ետապի շուրահատկութիւնները (դեկարրիստների պարտութիւնից հետո) մի կողմից գյուղացիական շարժման հետագա ուժեղացումն, մյուս կողմից՝ լիբերալ տենդենցների թուլացումն ու պաշտպանողական-պահպանողական տենդենցների ուժեղացումն ազնվականութեան մեջ։

Պուշկինի ստեղծագործութիւնը, բարդ և բազմապիսի, պիտի բնութենի նրա դասակարգային, բայց վոչ խմբակային նշանակութեամբ։ Զպետք է նայել Պուշկինին, վորպես հեռավոր անցյալի համար հաւաչող, վորպես ճգնված («ущемленной»), տոհմական ազնվականութեան ներկայացուցիչ. նույնպես չպիտի չափազանց մեծ նշանակութիւն վերագրել Պուշկինի «պրոֆեսիոնալիզմին», մեղանութեանը (այս կապակցութեամբ պետք է հատկապես քննադատորեն մոտենալ Բլադոյի աշխատանքներին)։ Պուշկինը տիպիկ ներկայացուցիչն է ազնվական դասակարգի հիմնական մասսայի (հատկապես վորպես կալվածա-հողատիրական դասակարգի), վորը դեռ բավական ուժեղ է և հզոր, բավական վստահ և իր ուժերին և իր պաշտպանած գիրքերին 20-ական իվականներին (մոտավորապես մինչև Միխայլովսկոյին աքսորվելը), միջին ազնվականութեան հիմնական մասսայի հետ միասին, Պուշկինը բռնված է լիբերալ ձգտումներով (ուսկայն հեղափոխական ձգտումների չփոխանցվելով) և դրանք գտնում են իրենց ցայտուն արտահայտութիւնը նրա ստեղծագործութեան մեջ—վոչ միայն եպիգրամների ու քաղաքական վոտանավորներին, այլ և «ազատախրախան» լիբերալի և բալրոնական հարավային պոեմների ընդհանուր բնույթի մեջ։

Բայց 20-ական թ. թ. լիբերոդեկան և 30-ական թվականներին, վերելն շրջան լիբերալների կապակցութեամբ Պուշկինը նահանջում է իր լիբերալիզմից (նորից ազնվականութեան հիմնական մասսայի հետ) և դրավում պաշտպանողական դիրքեր։

Այդ լիբերում և վոչ միայն այնպիսի գովածքների մեջ, վորպիսիք են «Стансы Николаю I», «Бородинская годовщина» և այլն, վոչ միայն «Палтава», «Медный всадник» ներբողը Պետրոս I-ին, այլ և այնպիսի գովածքներում, վորպիսիք են «Евгений Онегин», «Капитанская дочка», «Повести Белкина» ուր պատկերացվում է ազնվական կալվածքի և ազնվականութեան խաղաղ կյանքը (այդ խաղաղ կյանքի հակադրումն «անմիտ և անողորմ» ըուստին), այլ և սերը, մտերմութիւնն ու բնութիւնը ներբողող Պուշկինի լիբերալի մեջ՝ «Բաղդը հնչյունների և աղոթքների» պաշտպանման հետ։

Սակայն Պուշկինը, ի հարկե չի հանդիսանում ազնվականութեան ամենահետամնաց մասի ներկայացուցիչը. նա չափավոր հառաջադիմական է և այստեղից էլ բղխում են նրա մտորումները «դանդաղ բայց կայուն» բարիլավումների մասին, այստեղից էլ ճորտատիրութեան ծայրահեղութիւնների քննադատութիւնը (որինալ «Дуровский»), այստեղից էլ նրա «մարդկային կարեկցութիւնը դեպի մանր մարդիկ» («Медный всадник», «Повести Белкина», «Капитанская дочка», ձգտումն ընդհանուր սոցիալական բազան, վորի վրա հենվում է ազնվականութիւնը, իր կողմը գրավելու բուրժուազիային և մանր բուրժուազիայի մի մասը-գոյութիւնն ունեցող կարգի հիմքերն ընդհանուր ուժերով պաշտպանելու համար)։ Պուշկինի ստեղծագործութեան այդ կողմերը (կարեկցութիւնը դեպի մանր մարդիկ, ճորտատիրութեան հոգի կողմերի քննադատութիւնն անշուշտ ունեն պրոգրեսիվ նշանակութիւն, փառավանդ վոր Պուշկինը կարողացել է տալ, մինչև այդ ուս գրականութեան մեջ համարյա չեղած, ազնվական կյանքի ռեալիստական կենդանի պատկերներ (վորպիսի ռեալիզմի համար Պուշկինի վրա հարձակվեց ժամանակակից պահպանողական քննադատութիւնը)։ Այդպիսով Պուշկինը հանդիսացավ նոր ռեալիստական դրականութեան հիմնադիրներից մեկը՝ ավարտելով իրեն նախորդող զարգացումը։

Գոգոլի ստեղծագործութեան մեջ, դասակարգային պայքարի սրման հետեանքով, ավելի սուր, սակայն շուրահատուկ ձևով, արտահայտվում են պահպանողական տենդենցները։ Ազնվա-ճորտատիրական կարգի պաշտպանութեան մեջ Գոգոլն ուղղակի իդեալականացնում է այդ կարգը, միջնեցնում այդ կարգի դասակարգային հակասութիւնները (այստեղից՝ Գոգոլի սկզբնական պատմվածքները, այստեղից էլ ճորտատիրական ճնշման, վորպես ճնշման, բացակայութիւնը «Մեռած հոգիների» I-ին հատորում)։

Բայց Գոգոլը տալիս է նաև ճորտատիրական կարգի առանձին կողմերի քննադատութիւնը—«մառյլ կողմերը» վերացնելու

և ամբողջական կարգը ամրապնդելու համար, այստեղից ել սա-
տիրական բնույթի «Ռեվիզորը», «Մեռած հոգիները» I հատորը
և ուրիշ գրվածքները: Ճորտատիրական սխառիմը մաքրելու հալա-
տակով Գոգոլը դիմում է վերջապես հոգեկան ինքնակատարիա-
գործման բարոյական քարոզին՝ «Портрет»-ի, «Шинель»-ի և «Мертвые
души»-ի մեջ:

Գոգոլյան ունեցող կարգի Գոգոլյան քննադատությունը
կատարեց վճռական և դրական դեր (հատկապես սրանով է Գո-
գոլը կարևոր) գրականության զարգացման և զասակարգալին
պայքարի պրակտիկայում: Ռեալիստական չեզոքական տաղան-
դի ուժը Գոգոլին հնարավորություն տվեց նվաճել ճորտատիրա-
կան Ռուսաստանի այնպիսի գույնեղ պատկերներ, վորից ոգավեց
50-60 ական թ. թ. հեղափոխական դեմոկրատիան և հենց Գո-
գոլը հանդիսացավ ուս. նոր գրականության հայրը:

Վերջապես Լեբմոնտովի ստեղծագործության մեջ իր արտա-
հայտությունն է գտնում 30-ական թվականներին միջով անց-
նող ազնվականական լիբերալիզմի հոսանքը, այսինքն ձգտումը
բարենորոգելու ճորտատիրական կարգը բուրժուական պահանջ-
ներին հիման վրա: Սակայն սեպտեմբերի պայմաններում այդ հո-
սանքը չափազանց թույլ էր և չբռնում էր գալիս ստեղծագործու-
թյան հոռետեսական գունավորմամբ, դեպի «փոթորիկ» ու
«ազատություն» ունեցած անորոշ ուժանակի ձգտումների, ան-
հասկանալի անբավականության և հիասթափության մեջ առանց
գալիքի իդեալների վորոշակի արտահայտություն:

Սրանք են այն հիմնական սկզբունքային դիրքավորում-
ները, վորոնցով պետք է մոտենալ հիշյալ հեղինակների ստեղ-
ծագործությանը:

Պուշկինի, Լեբմոնտովի և Գոգոլի ստեղծագործության կյու-
թյունն ավելի պարզ և ճիշտ հասկանալու նպատակով պետք է
հաշվի առնել այն «չըջապատը», վորի մեջ գտնվում է ինչ այդ
հեղինակները: Պուշկինի կողքին (հաճախ նրանից անկախ) կանգ-
նած էին մի շարք ազնվական պոետներ, վորոնք հիմնակա-
նում արտահայտում էին նույն պրինցիպներն, ինչ վոր Պուշկինը
(Դեկվիդ, Դալիկով, Դալիտով, Բաբաշինսկի): Լեբմոնտովի կող-
քին կարելի է ցույց տալ Պոլեմայիկին մասամբ և Բեստուֆեով
— Մարկինսկուն, Պոգոլինսկուն (վերջին լեզուսն ավելի ա-
վագ սերնդին էլին պատկանում): Ինչ վերաբերում է Գոգոլին,
այա պետի ասել, վոր նա կանգնած էր ամբողջ «նատուրալ
զարդի» գլուխը, ըստ վորի բնորոշ է, վոր Գոգոլյան ստեղծա-
գործությունից ոգտագործվում էր գլխավորապես իրականու-

թյունը պատկերացնելու հումորական—չեզոքական ելեմենտը,
վորի հետևանքով «նատուրալ զարդը» նպաստում էր (հիմնա-
կանում) վոր թե ֆիողալական ճորտատիրական կարգերի պաշտ-
պանություն, վորին ձգտում էր ինքը—Գոգոլը, այլ այդ կար-
գի դեմ ուղղված պայքարին, հատկապես շնորհիվ Բելինսկու
գործունեության, վորը հանդիսանում էր հեղափոխական դեմո-
կրատական իդեոլոգիայի ավագ ներկայացուցիչը:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

I. Պուշկին. — Руслан и Людмила, Кавказский пленник, Цыгань, Евгений
Онегин, Отава, Медный всадник, Капитанская дочка, Борис Годунов, Деревня,
К Чаадаеву, Послание в Сибирь, поэт Чернь, Эхо, Архон, помятник:

II. Լեբմոնտով. — Դև, Մեղի, Измаил-бей, Герой нашего времени,
Смерть поэта, предсказание, я не байрон (1830), Дума (1833), последние, новоселье
Валерик:

III. Գոգոլ. — Мертвые души т. I и II, шинель, Старосветские помещики,
Саргис-Богатый, Ревизор, повесть о том, как поссорились Иван Изан-
вич с Иваном Никифоровичем:

Բ Ն Ա Դ Ա Տ Ա Կ Ա Ն

1. Луначарский-вступительная статья о пушкине в собр. соч. пушкина изд.
ноел 1931 г. т. I.

литературная энцикл. т. VI лермонтов (статья лелевича. Լեբվիչը ճըգ-
նում է Լեբմոնտովին հեղափոխականացնել):

2. переверзев-Гоголь (литер. энц. т. II. քննադատելու համար).
Успенвич-Гоголь и его «исследователь» переверзев (лит. и искусство, 1930 г.
№ 1):

3. Коган.—история русской литературы с древнейших времен стр 54—73.

Մ Ե Թ Ո Ղ Ա Կ Ա Ն Յ Ո Ւ Յ Մ Ո Ւ Ն Ք Ն Ե Ր

Այս թևման միջոցառողական տեսակետից հանդիսանում է
զգվարագույններից մեկը (մատերիալի կողմից նա զգալի կերպով
հեշտ է նախորդից, քանի վոր նյութը հանրաժանութ է և դյու-
րամատչելի): մինչև այժմ մենք չունենք Պուշկինի և Լեբմոնտովի
ստեղծագործության մասին հիմնական աշխատություն, իսկ Գո-
գոլի ստեղծագործության հետ սուր կերպով առաջ է քաշվում գե-
ղարվեստական ստեղծագործության և աշխարհայացքի փոխա-
րարկության հարցը մի կողմից, Գոգոլի ուսումնասիրության ժա-
մանակ պերեվերզևի և զրույթների հաղթանարման խնդիրը՝ մյուս
կողմից:

Հեռակայությունը գրավոր աշխատանք են ներկայացնում հե-
ղինակներին մեկի մասին (իրենց ընտրությամբ)՝ տալով հեղի-
նակի սոցիալ զասակարգային արժեքավորումը գլխավոր լեզվե-
րից մեկի (Յեվգենի Անեգինի կամ Կապիտանի աղջկա, Ռեվիզորի
կամ Մերտվիկե դուշի, Դևի կամ Մեղի) կոնկրետ առաջիկի հի-
ման վրա:



ԹԵՄԱ 40-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ԲԵԼԻՆՍԿԻ, ԳԵՐՑԵՆ)

40-ական թվականների յերկրորդ կեսին կապիտալիստական հարաբերությունների զարգացումը մի կողմից և գյուղացիական շարժման աճումն մյուս կողմից (ինչպես և հեղափոխական շարժման արձագանքներն Արևմտյան Յեվրոպայում, ուր մոտենում էր 1848 թվի հեղափոխությունը) հանգեցնում են նրան, վոր գրականության ուշագործության կենտրոնն և դառնում ճորտատիրական սխտեմի հարցը: Կոպենհագենում և լուբեկում և լուբեկում «միացյալ ֆրոնտ» ճորտական իրավունքի դեմ, վորը հետագայում ինչպես կոտենենք, վերացավ (1861 թվի ռեֆորմին նախորդող այդ միություն և նրա անկախություն ժամին Լենինը խոսում է «Ինչ ևս ժողովրդի բարեկամները» աշխատության մեջ): Ճորտական իրավունքի դեմն ելին թե լիբերալ ազնվականության ներկայացուցիչները (որինակ Տոբոլսկի իր «Затиски охотника», Գրիգորովիչը «Деревня» և «Антон Горемыка» գրվածքներով) թե լիբերալ բուրժուազիայի ներկայացուցիչները (որինակ Գրիգորովը, վորի «Несомненная история»-ն բուրժուական վերածնության կոչ էր անում, իսկ 1848 թվին ապագրված «Արևմտյան յերազր» ուղղակի խփում էր ճորտական իրավունքին) և թե գյուղացիության շահերի պաշտպանները (հեղափոխական գեմոկրատիայի ներկայացուցիչները (որինակ Շեվչենկոն, Ինչպես և Նեկրասովը, վոր 40-ական թվականների կեսից արդեն հաստատ կանգնած էր գյուղացիության լեզվի ճանապարհի վրա):

Յեթե վոչ ճորտական իրավունքի, վորպես իրավունքի, ապա ճորտատիրական սխտեմի տարբեր արտահայտությունների դեմ (կենցաղային, ընտանեկան հարաբերությունների, իդեոլոգիական բնագավառի և այլն) ծառանում են Գերցենը, Սալտիկովը (իր սկզբնական գրվածքներում), մասամբ Դոստոյևսկին (իր առաջին պատմվածքի «Бедные люди» մեջ), քիչ ուշ՝ Աստրովսկին:

Գրական այդ շարժման կենտրոնում կանգնած էր Բելինսկին,

60-ական թվականների հեղափոխական դեմոկրատիայի իդեոլոգիայի խոշոր նախակարապետը նախառեֆորմյան շրջանում (այսպես և նրան բնորոշում Լենինը): Բելինսկուն պետք է դիտել հատկապես վորպես հեղափոխական-գեմոկրատական իդեոլոգիայի վաղ ներկայացուցիչ: աշխտեղից էլ հասկանալի կդառնան նրա տատանումները, վորպես չափազանց դժվարին պայմաններում տեղի ունեցող նոր իդեոլոգիայի ձևավորման պրոցես: Շեվչենկով և ապա Հեգելով տարվելու շրջանը պետք է դիտել վորպես Բելինսկու առաջնագայումն, վորպես վորոնումն իդեոլոգիական այնպիսի սխտեմի, վորը փրկություն էր հիմնավորել հեղափոխական գեմոկրատիայի սխալ պահանջները: և քանի վոր վոչ Շեվչենկի, վոչ էլ Հեգելի փրկությունները չկարողացավ աջակցի դեր կատարել, Բելինսկին հրաժարվեց այդ սխտեմներից և Ֆեյերբախի մատերիալիզմի մեջ գտավ այդպիսին: Բելինսկին հանգեց այն յիզրակացության, վոր աշխատավորական մասսաների համար զգվելի չե ուսական իրականությունը, վոր անհրաժեշտ է փոխել այդ իրականությունը (վոչնչացնել ճորտական իրավունքը, միապետական կարգը, յեկեղացու տիրապետությունը): Հատկապես աշխատավորական մասսաների (այսինքն այն շրջանում առաջին հերթին գյուղացիության) ոգտին իրականությունը և փոփոխելու պլանով էլ Բելինսկին արժեքավորում է գրական յերևույթները: Հարկավոր է առանձնապես ընդգծել Բելինսկու այդ կապը դասակարգային պայքարի իրական կացության հետ, նրա գործունեության դասակարգային-ռեալ նշանակությունը (ընդգծված Լենինի կողմից «Вехи» ժողովածվի մասին գրած հոդվածում) և հակադրել այդպիսի ըմբռնումն արտարակոտ — տրամաբանական, դասակարգային բովանդակությունից դուրի, Բելինսկու գործունեության Պլեխանովյան ըմբռնմանը (Պլեխանովը չվերել է մի շարք հոդվածներ Բելինսկուն և այդ հոդվածներում շատ բան կա արժեքավոր, բայց Բելինսկու դասակարգային բընույթավորը չկա նրանց մեջ):

Չափազանց բնորոշ է Գերցենի իդեոլոգիական զարգացման ուղին: Արդեն 30-ական և 40-ական թվականների տոգորված ուտոպիական սոցիալիզմի դադափարներով, Գերցենն իր գեղարվեստական գրվածքներում («Кто виноват», «Сорока-воробейка», «Из записок доктора крупова») պայքար է մղում ճորտատիրական կարգի դեմ: Իր վեպում և պատմվածքներում Գերցենը դնում է միշտ հասարակական խոշոր խնդիրներ — պատմության իմաստի, ընտանեկան կեցության և դաստիարակության, ուսական ինտելի-

գենցիայի դերի, ճորտական իրավունքի մասին և այլն: Նրա գրքավածքներն այդպիսով ստանում են հասարակական ակտուալ նշանակություն, ըստ վրբի Գերցենը կոտորում և ընդունված գրական նորմերը և ինքը հաճախ մտցնում ընդհանրացնող դիտողություններ իր շարադրանքի մեջ: Բելինսկին զոր չնչեց մշտքերի գերակշռությունը նրա մոտ: Շատ պայծառ և Գերցենի լերգլծական տաղանդը, իր հումորով նա հաճախ մոտենում և Գորդին:

Ճորտատիրությունը, ընտանեկան դեպոսիզմին, տգիտությունը և քաղքենիությունը տրվող հարվածներն անշուշտ ճորտատիրական կարգի դեմ միացած Գերցենի պայքարի արտահայտություններն էլին: Բայց այդ պայքարը դեռ այնքան էլ վորոշակի և վճռական չէր. Գերցենը դեռ չէր սահմանագծվել լիբերալ ազնվականության լազերից: Յեվ հետագայում և վորպես քաղաքական հմիգրանտ և ցինգուրից աղատ արտասահմանյան ուսու մամուլի հիմնադիր, Գերցենը յերբեմն լիբերալ կոչերով դիմում և ուսու ազնվականությանն ու նույնիսկ ցարին: Սակայն դասակարգային պայքարի սրումը, վորը հասցրեց 1861 թվի «ոսփորմուն», ազնվականական շահերի վորոշակի դասավորումըն այդ «ոսփորմուն», Գերցենին հրում են հեղափոխական դեմոկրատիայի լազերը և նա դառնում և «ոուսական սոցիալիզմի», նարոդնիկության նախահայրերից մեկը (վրբի մեջ իսկական սոցիալիզմ չկար և վրբի հետևում իսկապես թագնվում էր մանր ապրանք արտադրողների, գյուղացիության շահերի պաշտպանությունը):

Գ Բ Ա Ն Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

I. Белинский—Литературные мечтания. Горе от ума. Сочинения Пушкина. письмо к Гоголю.

II. Герцен.—Кто виноват. былое и думы (частично).

ՔՆՆԱԴԱՍԱԿԱՆ

1. Ленин.—памяти Герцена (собр. соч., изд. 3, т. XV).
2. предисловие Коменева или Эльсберга к книге «былое и думы» Герцена.
3. Глоголев Н. За ленинскую критику взглядов плеханова на белинского («Марксистско-ленинское искусствознание», 1932 г., № 2).
4. Коган П. С.—Очерки по истории новейшей русской лит. т. I (белинский Герцен).

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՅՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Բելինսկու և Գերցենի ստեղծագործություններից մենք վերցրում ենք համեմատաբար շատ քիչ բան, ըստ վրբի Գերցենին դիտում ենք վորպես գրող—արվեստագետի, անցողիկ կերպով կանգ առնելով նրա հասարակական—հրապարակախոսական գործունեության վրա. հատկապես մեր խնդիրն և վերհանել Գերցենի ուղղությունը նրա գեղարվեստական գրվածքների մեջ, ցույց տալ նրա աշխարհայացքի գեղարվեստական գրասվորումը (դրանով ափելի քիչ են զբաղվել Գերցենի մասին գրած հեղինակները): Բելինսկու նշատամբ անհրաժեշտ և ընդգրծել, վոր նրա հոգվածն էր Պուշկինի, Լերմոնտովի կամ Գոգոլի մասին վերցնում ենք վոչ թե վորպես ղեկավար աղբյուր՝ այդ հեղինակների ստեղծագործության ուսումնասիրելիս, այլ մենք պետք և ուսումնասիրենք քննադատական հոգվածները պատմական—գրական պլանով և բացատրենք քննադատի վերաբերմունքը դեպի այս կամ այն հեղինակը, այս կամ այն գրվածքը, վորպես գրականության և քննադատության մեջ արտահայտվող դասակարգային պայքարի փաստ:

II. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ.

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՁՈՐՐՈՐԴ

ԹԵՄԱ.— 50 — 60 Թ. Թ. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ-ԴԵՄՈՆՐԱՏԱԿԱՆ
ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Արդյունաբերական կապիտալիզմի շրջանի գրականության ուսումնասիրությունը պիտի կատարվի կապիտալիզմի զարգացման յերկու ուղիների լենինյան ուսմունքի տեսանկյունով: Անկասկած «չերկու ուղիների» նախադրյալները կային դեռ ճորտատիրական Ռուսաստանում, սակայն վորոշակի պայքար «պրոսական» կամ «ամերիկական» ուղիների համար ծավալվում է 1861 թվի «ռեֆորմին» նախորդող կամ գրգռիկ շրջանում: Ճորտատիրական իրավունքի դեմ կազմված ալն «միացյալ ֆրոնտը», վոր գոյություն ունեւ 40-ական թվականներին, ջլատվեց, յերբ ճորտատիրության վոչնչացման հարցը կանգնեց ռեալ հողի վրա: լիբերալ ազնվականության (ու ըուրժուգիայի) և հեղափոխական դեմոկրատիայի ուղիները բաժանվեցին: Ճորտատիրության վոչնչացումն հնարավոր եւ յերկու ճանապարհով — ռեֆորմի, աղանդականության շահերից յելնող (զարգացման «պրոսական» ուղին) կամ պուզացիական հեղափոխության ճանապարհով («ամերիկական» ուղին):

Գյուղացիական հեղափոխության հետևողական գաղափարախոսներ հանդիսացան Չերնիշևսկին և Դրբոլյուբովը: Անհրաժեշտ է ընդգծել, վոր կապիտալիզմի զարգացման ամերիկական ուղու համար մզվող պայքարի մասնակիցներն իրենք անգամ չէին հասկանում, վոր դա պուքար եր հենց կապիտալիզմի զարգացման համար: Թե Չերնիշևսկին և Թե Դրբոլյուբովը հանգիստում են ուտոպիական սոցիալիզմի ներկայացուցիչներ, բայց որյեկտիվորեն նրանց պայքարը պայքար եր հանուն կապիտալիզմի զարգացման «ամերիկական» ճանապարհի, վորի համար լայն ճանապարհ կբացվեր ճորտատիրության մնացորդների վոչնչացմամբ: Անհրաժեշտ է նշել նաև, վոր Չերնիշևսկու և

Դրբոլյուբովի իդեոլոգիան դեռ տիպիկ նարոդնիկական չէն հանդիսանում, վոր Չերնիշևսկին շատ ալիքի բարձր է կանգնած նարոդնիկության հետագա տեսաբաններից: Վերջապես կարևոր է ընդգծել Չերնիշևսկու և Դրբոլյուբովի ետեւ ռիկալան հայացքների և փիլիսոփայական մատերիալիզմի պրակտիկ — դասակարգային նշանակւթյունը (վորը չկա Պլեխանովի Չերնիշևսկու և Դրբոլյուբովի մասին գրած ալն աստիճաններին մեջ):

Չերնիշևսկին հանդես չեկավ, վորպես գրական քննադատ, պաշտպանելով հասարակական հարցերի լուծմանը նպաստող գրականություն, ռեալիստական, ալտուալ պրինցիպները, աղախի գրականության համար կուլում եր և Դրբոլյուբովը: Իր տեսական սկզբունքները Չերնիշևսկին դրել և և իր նշանավոր «Что делать» վեպի մեջ: Չերնիշևսկին, վորպես մատերիալիստ, ցույց է տալիս այստեղ, Թե ինչպես են միջավայրի պայմաններով ձևակերպվում մարդկային բնավորությունները: վորպես ուտոպիստ — սոցիալիստ նա գծում է սոցիալիստական հասարակության լուծման (վերա Պավլովնայի չորրորդ չերալի մեջ) և կոչ է անում դեպի ալք իդեալը: վորպես հեղափոխական դեմոկրատ նա կոչ է անում դեպի հեղափոխությունը, դեպի պայքար նոր կյանքի համար, գծում է մարտիկ — հեղափոխական Ռախմիսովի պատկերը: Ամբողջ ռոմանը թափանցված է մոտագահ հեղափոխության սպասելիքով և աչքի խփում իր կալտառ ու պայծառ բնույթով:

Չերնիշևսկին պատկերում է «նոր մարդկանց» բոլորովին ալք կերպ, քան ազնվական բուլետիստիկան (գեդիցիկ գրականությունը) և նրանց հակադրում է հին աշխարհին: Անանձնապիս նրա մոտ հաջող են հին աշխարհի պատկերները, վորի մեջ Չերնիշևսկին չի դիջում խոշորագույն արվեստագետներին (այսպես, որինճակ, Մարիա Ալեքսեևնայի պատկերը): Չերնիշևսկին յուրաքանչեւ և նրբորեն պատկերում է իր հերոսների հոգեկան աշխարհը, վարպետորեն տալիս է նրանց խոսվածքը: Ըստ այնմ նա գիտակցաբար նահանջում է բելիտրիստիկայի ընդունված սովորական ձևերից (բնորոշ է գրուցը «խորաթափանց ընթերցողի» հետ), հանդես դալով վորպես խոշոր և որիգինալ դեմք:

Հեղափոխական դեմոկրատիայի յուրատեսակի ուղեկից եր 60-ական թվականների լիբրորդ խոշորագույն քննադատը-Պիսաբովը:

Պիսաբովը հանդիսանում է անկայուն և տատանվող քաղաքական մանր բուրժուազիայի տիպիկ ներկայացուցիչը: Հեղա-

փոխական շարժման վերելքի շրջանում նա մոտենում է գյուղացիական հեղափոխության գաղափար փառանքին, հետո չել, վճռական պայքար մղելով ազնվա-էոր օստրալան կարգի դեմ (հարելով այդ խնդրում կապիտալիզմի զարգացման «ամերիկական» ուղււ համար պայքարողներին) Պրսարեւը հեռանում է սոցիալիստական իդեալներից և հեղափոխական տակտիկայից, դառնալով «կուլտուրական կապիտալիզմի» քարոզիչ:

Վուլգար մատերիալիստ (հետ թեքվելով դեպի պոզիտիվիզմը), նեղ պրակտիկ «շահերի» քարոզիչ, Պրսարեւը բռնում է ավելի սուր դիրք (Չ. Բնիշեվսկու և Դորրոյլուրովի համեմատութեամբ) դեպի արվեստն ընդհանրապես, դեպի գրականութունը մասնավորապես, համարելով այն մարդկային գործունեություն անոգուտ, նույնիսկ վնասակար բնագավառ: Այստեղից ել նրա կտրուկ—ժխտական վերաբերմունքը դեպի Պուշկինի, մինչև անգամ դեպի Սալտիկով—Շչեդրինի ստեղծագործությունը, այստեղից ել նրա համակրանքը դեպի արվեստի նշանակությունը բացառող Բազարովը: Այդ սուր բացասման («նիհիլիզմի») մեջ չերևան է զախածանր բուրժուազիայի հալոսն դեպի անարխիստական տիպի խռովությունը:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Չերնիշևսկի. — Эстетическое отношения искусства к действительности. Очерки гоголевского периода русской литературы. Что делать.
2. Դորրոյլուրով. О степени участия народности в развитии русской литературы. Что такое обломовщина.
3. Պրսարեւ. Реалисты. Мыслящий пролетари т. пушкин и беллинский.

ՔՆՆԱՆԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Ленин—О Чернышевском (изд. 2: т. «крестьянская реформа» и пролет. крестьянская революция. (Собр. соч. т. XV)
2. лит. энциклопед., т. 3. (добролюбов)
3. Ипполит. Тургенев и чернышевский («пролетарская литература», 1931 г. № 4).

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄ ՈՒՆՔՆԵՐ

Հարկավոր է նշել, Վոր Դորրոյլուրովի հոդվածները Աստրովսկու կամ Դոնչարովի մասին, ինչպես և Պրսարեւինը՝ «Հայրերի և գաղականների» մասին մենք չենք ընդունում վերոգրյալ գեղավար սկզբունքը:

Վերևում մատնանշված աղբյուրներից գլխավոր ուշադրությունը պետք է նվիրել Լենինի հոդվածներին, փորձելով վերջապի տրված է հեղինակների դասակարգաին բնութագրելը (ի տարբերություն Պրիսարեւի):

ԱՌԱՋԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԹԵՄԱ—ՇԵՂԱՓՈԽԱԿԱՆ—ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 50-70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հեղափոխական—դեմոկրատական 50-70-ական թվականներին գրականությունը գլխավորում էին Նեկրասովն ու Սալտիկով—Շչեդրինը, վորոնք իրենց գրական գործունեությունն սկսել էին դեռ 40-ական թվականներին: Նրանց ստեղծագործությունը գնում էր նույն ուղղությամբ, ինչ ուղղությամբ գործում էր Չերնիշևսկու խոսքը. նրանք յերկուսն էլ կտրեցին իրենց կապերն ազնվական դասակարգի հետ և վճռականորեն կանգնեցին գյուղացիության շահերի պաշտպանության դիրքերի վրա:

Նեկրասովի ստեղծագործության մեջ պետք է ընդգծել նրա պայքարը ճորտատիրական հարաբերությունների լիակատար վոչնչացման համար, 1861 թվի «սեֆորմի» կեղծիքի ռեալիզմը նրա կողմից, նրա կոչերը դեպի «փոթորիկ» և պայքարը: Անհրաժեշտ է նշել, Վոր Նեկրասովը պայքար է մղում վոչ միայն ճորտատիրական, այլ և կապիտալիստական շահագործման դեմ, գիշատիչների և կուլակության դեմ, բյուրոկրատիայի դեմ, լիբերալ ֆրադաբանության և լիբերալ չափավորականության դեմ: Պետք է նշել առանձնապես Նեկրասովի պոետական խոշոր տաղանդի մասին վկայող նրա ստեղծագործության լայն ծավալն ու ընդամայնությունը (բազմապիստություն թեմատիկայում, ժանրերի, բանաստեղծության և վոճի հարստություն, գրելու կարողությունը տարբեր լոգոներին կամ ընթերցողների համար, բանաստեղծական մատերիալի գեղարվեստական վերամշակում), ինչպես և ազնվականական գրականության դեմ ուղղված նրա գործունեության մարտական նշանակությունը: Անհրաժեշտ է նշել նույնպես, Վոր Նեկրասովը գլխավորում էր «քաղաքացիական պոեզիայի» զարուցի մի ամբողջ խմբակ (Միխայլով, Դուր-Միլեր, չեղը. Կուրոչկիններ և այլն): Սխալ է Նեկրասովի պլեխանովյան գնահատականը. Պրիսարեւը չի զրոսվորում Նեկրասովի:

վի, վորպես հեղափոխական գլուզացիութեան յերգչի, դասակարգային նշանակութեանը, չի գնահատում նրա պոետական նշանակութեանը՝ չափելով ազնվականական գրականութեան չափանիշով. վորպես «ազնուշին ինտելիգենցիայի» ներկայացուցչի լինելը անտեսում Գորբաչովը և ուրիշ շատերը:

Նեկրասովի մոտ մենք չենք գտնում նարոդնիկական հայացքների ուղղակի և սխառմատիկ շարադրումն, բայց նրա գործունեությունն ընդհանրապես գնացել է նույն ուղղությամբ ինչ ուղղությամբ գնացել է հեղափոխական նարոդնիկների գործունեությունը. դուր չէր նա կանգնած «Современник»-ի և այդ «Очеловеченные записки»-ի գլխին, դուր չէին ատում նրան ազնվականության ներկայացուցիչները և գնահատում հեղափոխական գեմոկրատիայի այնպիսի ղեկավարներ, վորպիսին եր Զերնիշեկին: Դրա համար պետք է նշել նաև, մոր Նեկրասովի ստեղծագործության զարգացումը գնում է դեպի ձախ և վոչ թե աջ (չնայած տատանումների և անկման առանձին դեպքերին):

Այդ պահով է գնում նաև Սալտիկով-Շչեքրինի գործունեությունը: Սալտիկովը վորպես զենք ընտրելով սատիրան, հարվածում է թե նախառեֆորմյան և թե հետառեֆորմյան շրջանի ազնվականությանը, ընդգծելով այն հանգամանքը, վոր ճորտական իրավունքի անկման հետ Դալիկին հարաբերությունների կույթունը (այսինքն գլուզացիության տնտեսական ստրկացումը) չի վերացել. այսպիսով նա պայքար է մղում (ինչպես Նեկրասովը) ճորտատիրության լիակատար լիկվիդացիայի համար, աչսինքն զարգացման «ամրիկական» ուղու համար: Սալտիկովը խորադանում է նաև շահագործման նոր ձևերը և հատկապես կուլակությունը, վորի ուժը նա տեսնում է ցույց է տալիս իր յերկերի մեջ: Նա հարձակվում է ազնվա-միապետական իշխանության բյուրոկրատական ապարատի վրա, խորանում պայքարի անընդունակ լիբերալ «հասարակությունը»:

Այդ բոլորը Սալտիկովին դարձնում են հեղափոխական—դեմոկրատական գրականության ներկայացուցիչներից մեկը, ըստ վորի իր յերգիծական ժանրում նա ծայրահեղ վարպետության է հասնում. նա ոգտագործում է յերգիծանքի ամենաբազմազան ձևեր (հերիաթներ, ակնարկներ, խրոնիկա, համակներ և այլն), նրա մոտ հրատապ հարցերը միանում են պատկերների և նկարների տիպիկականության հետ («пошехонская старина», «Господа Головлевы»), Յուզուշկա Գոլովիկին, կուլակ Դերունովի և մյուսների պատկերները). նա կարողանում է տալ իր ժամանակաշրջանի ամենապայծառ շարիներ և հաղորդել զրանք վորոշակի և արտահայ-

տիչ բանաձևերով «Чумазый пришел», «иен достанить» և այլն), կարողանում է հրաշալիորին տալ և դեղձկական խոսվածքը և հրամաններ ի ու շրջաբերականների բյուրոկրատական լեզուն («խելքը մթազնող դեղարտամենտ», «նախագիծ ընդհանուր գնդականաբություն և նրա բարերար հետևանքների մասին» և այլն), կարողանում է տալ հասարակական հարաբերությունների իսկական մեխանիկայի խորը ցուցադրում և աչդ—մեխանիկայի մարմնացումն կենդանի մարդկանց մեջ («пошехонская старина» և մյուսները):

Վոչ Նեկրասովին, վոչ էլ Սալտիկովին չի կարելի անվանել տիպիկ նարոդնիկներ: Նարոդնիկները կապիտալիզմի զարգացումն ըմբռնում էին վորպես ռեգրես կամ անկում, իդեալականացնում էին համայնքը, ընդունում էին համայնքի միջոցով դեպի սոցիալիզմ զարգանալու Ռուսաստանի ճանապարհի առանձնահատկությունը, ինտելիգենցիան համարում էին վերդասակարգային հերոսական մի ուժ, վորն ոգնում էր և զալիս գլուզացիության՝ նրան սոցիալիզմի թագավորություն մտցնելու համար: Նեկրասովի և Սալտիկովի մոտ մենք տեսնում ենք թրշնամական վերաբերմունք դեպի կապիտալիզմը, բայց չի ասված թե կապիտալիզմն «անհրմալ», «արհեստական» և. Սալտիկովը ընդհակառակը, ցույց է տալիս, թե ինչպես կապիտալիզմն աճում է ռուսական իսկ հողից: Համայնքի իդեալականացում մենք գտնում ենք նաև Նեկրասովի մոտ, իսկ Սալտիկովը ուղղակի մատնանում է, վոր համայնքը չի փրկում գլուզացիներին քաղաքումից և չի արդելակում գլուզացիների շերտավորմանը: Դիմումը հերոսական ինտելիգենցիային բնորոշ է թե Նեկրասովի և թե Սալտիկովի համար, և աչդ անկասկած մոտեցնում է նրանց նարոդնիկներին (աչդ խոսքի իսկական իմաստով), ինչպես և մոտեցնում է նարոդնիկների ուշադրությունը դեպի գլուզացիությունը, աչքաբար նրա յերջանկության, նրա շահերի համար:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն

1. Նեկրասով. «кому на русси жить хорошо». железная дорога, колыбельная песня, у парадного годезда.
2. Սալտիկով—Շչեքրին. Փոքրիկ պատմվածքներ. Господа Головлевы. Пошехонская старина.

Ք Ն Ն Ա Դ Ա Տ Ա Կ Ա Ն

1. Ольшинский. Салтыков-щедрин.
2. леханов-Некрасов (соч. т. х. պետք է նկատի ունենալ Պլիսա-Մովի սխալ գնահատականը).
3. Покровский М. Н. Некрасов.

ԳՐԱՎՈՐԻ ԹԵՄԱ

I 1. Նեկրասովի իդեոլոգիական ուղղութիւնը. Նեկրասովը և նարոդնիկութեան իդեոլոգիան.

2. Նեկրասովի հիմնական թեմաները. հեղափոխական մտաւիճերը Նեկրասովի ստեղծագործութեան մեջ և նրանց նշանակութիւնը.

3. Նեկրասովի պաշտօնը ազնվականական պոետի զեմ և նոր վոճի ստեղծումը.

4. Հեղափոխական դեմոկրատիայի գրականութիւնը մենշևիկո-տրոցկիստ. գնահատութեամբ:

II. 1. Ազնվականական բուրժուական, կուլակութիւնը քաղաքնիկութիւնը և լիբերալները Սալտիկովի յերկերում.

2. Սալտիկովը և նարոդնիկութիւնը (վերաբերմունքը դեպի համայնքը, կապիտալիզմը և գյուղացիները).

3. Սալտիկովի լիբերալների վարպետութիւնը:

(Գրաւորը լինելու է հեղինակներից մեկի մասին, հեռ. ընտրութեամբ):

ԱՌԱՋԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՅԵՐՈՐԴ

ԹԵՄԱ. ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԵԼԵՏՐԻՍԻ ՎԱՆ 50-70 ԹԹ.

Այս առաջադրութեան մշակման հիմքը պիտի կազմի 60-ական թվականների «Լուսավորիչների» և նարոդնիկութեան ընդհանուր տրված կենսինի «От какого н следства мы отказываемся» հոդվածում: 60-ական թվականների դեմոկրատական գրողների խումբը (Պոմյալովսկի, Ռեշեպտիկով և մյուսները), նրա մեջ յեղած տարբերութիւններով հանգերձ, ընդհանրապես կարելի չէ համարել տիպիկ «լուսավորչական» լենինյան բմբունմամբ: Նրանց համար հատկանշական է թշնամանքը դեպի ուսական կյանքի ճորտական կարգի բոլոր արտահայտութիւնները (գյուղացիներէ ճնշումն՝ թեկուզ և առանց ճորտական իրավունքի, իրավական անհավասարութիւնն ազնվականների և «պլեբեյների» միջև, քաղաքի չքավորութեան ծանր վիճակը, կանանց ճնշումն, անտրմալ դաստիարակութիւնը և այլն), բնորոշ է ջերմ սերը դեպի բոլոր աշխատավորները (Ուսպենսկու մոտ առանձնապես խոշոր և ուշադրութիւնը դեպի գյուղացիութեանը, Ռեշեպտիկովը աւելով գյուղի սարսափելի դրութիւնը, պատկերում է նաև հանքադորձարանների բանվորների կյանքը, Պոմյալովսկին գրաւվում է քաղաքի չքավորութեան և մանր-բուրժուական ինտելիգենցիայի կյանքով): Նրանց գրվածքներից բոլորում է մի յեղափոխութիւն՝ ուսական կյանքի լիակատար վերականգնում, նրա յեւրոպականացում:

Բայց հարկավոր է նշել, վոր այդ գրողների մոտ չկա իդեոլոգիայի լիակատար հստակութիւնն առանձնապես վորոշակի չին իդեալները, պարզ չին և այն ուղիները, վորոնցով նրանք չեն թաղրում են փոփոխել կյանքը: Յեթե «Լուսավորիչների» մեջ Չերնիշևսկին գյուղացիական հեղափոխութեան գաղափարախոսն էր և հետագա հեղափոխական նարոդնիկութեան հիմնադիրներից մեկը, ապա վոր Պոմյալովսկին, վոր Ռեշեպտիկովը և վոր էլ Ն. Աւսպենսկին չէին կարող ալիքիսի դերի մասին հավակնել: Եւս-

պես նրանց կարելի չե համարել հեղափոխական դեմոկրատիայի «ուղեկից» կամ «զինակից»։ Նրանց «լուսավորչականութունը» չի բարձրանում հեղափոխականի աստիճանին։ Գրողների այդ խմբից ամենատաղանդավորը վաղամեծ Պոմալովսկին էր։ Նրա գրվածքները հետաքրքիր են վերապես փորձեր նոր վոճի տիպեր ստեղծելու, վեպեր, վորոնք կառուցվածքով կարծեք նմանվելով ազնվական գրականության վեպերին (ի տարբերություն Ն. Ուսպենսկու ոչերկների) միաժամանակ հակադրվում են վերջիններին։ Պոմալովսկին վերցնում է «մեղանական» հերոսին, պատկերում է «մեղանական» չերջանկությունը (և վոչ «ազնվականական» բունը)։ Թե բնութանը, թե քաղաքի և թե դաստակերտի (կալվածքի) կյանքը, թե հոգեկան վերապրումները (զրանց շարքում նաև սիրայինը) պատկերվում են յուրահատուկ կերպով, լիբիկական պաթոսից անցնելով պրոզայիկ, հեգնական դիտողությունների՝ խառնված վուլգարիզմով, և այլն։

Ն. Ուսպենսկին բնորոշ և առանձնապես իր ոչերկներին ճշմարտությամբ, գլուղացիական կյանքի արտանկարչությամբ (այդ ճշմարտության համար նրա պատմվածքները բարձր երգնահատում Չերնիշևսկին՝ նրան հակադրելով ազնվական գրողների կողմից «փոքր լեղրոր» (այսինքն գլուղացիների, Հ. Գ.) քաղցրումեղցր պատկերավորումներին)։ Ռեալիստիկովն իր պատկերումների սառը պարզությամբ տեղ-տեղ հիշեցնում է դիտական-ազգրական նկարագրություն։

ԱՌԱՋԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՅՈԹԵՐՈՐԴ

ԹԵՄԱ. — ԱԶՆՎԱԿԱՆ ՅԵՎ ԼԻԲԵՐԱԼ ԲՈՒՐժՈՒԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 50—70 Թ. Թ. (ՏՈՒՐԳԵՆԵՎ, ԳՈՆԶԱՐՈՎ, ԱՍՏՐՈՎՍԿԻ)։

Հեղափոխական դեմոկրատիայի պայքարը զարգացման «ամերիկական» ճանապարհի համար հակադրվում է «պրուսական» ճանապարհի համար մղվող պայքարին։ «Պրուսական» ճանապարհի պաշտպանության խնդրում եապես միանում են լիբերալ ազնվականության ինքնուրույն ու լիբերալ բուրժուազիայի ներկայացուցիչները և ճորտատերերի ու լիբերալների միջև տարվող պայքարը պայքար էր իշխող դասակարգերի ներսում, ինչպես նաև է կենտրոն։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը մի, գլուղացիության հեղափոխական շարժման աճումը՝ մյուս կողմից, կալվածատիրական դասակարգին մղում էին դեպի ղիշում և դրա հետ միասին չեղելու դեպքում գլուղացիական հեղափոխության հանդեպ՝ բուրժուազիային նհաւում էր կալվածատերերի գերիշը։

«Պրուսական» ճանապարհի համար մղվող պայքարի տիպիկ արտահայտություն է հանդիսանում Տուրգենևի ստեղծագործությունը։ Հարկավոր է ինչպես և Նեկրասովի վերաբերմամբ, հրաժարվել Տուրգենևի գրական գործունեությունը իբր թե վորոշ մանկական տպավորությունների լեգենդայից։ Տուրգենևի սկզբնական գրվածքներում բացակայում է վոչ միայն պայքարը ճորտական իրավունքի դեմ, այլ և գլուղացիությունը։ Միայն 40-ական թվականների վերջում Տուրգենևի հանդես է գալիս գլուղացիներին պատկերող «хорь и калинник» ոչերկով, առանց առանձնապես հարձակում գործելու ճորտական իրավունքի վրա (Պորը մինչև անգամ չի ցանկանում ազատ արձակվել) և միայն «Записки охотника»-ի հետագա պատմվածքներում ու ժեղանում են հակաճորտատիրական մոտիվները։ Նախ բնորոշ է, ճորտատիրական հարաբերությունները պատկերացնող «Записки охотника»-ի պատմվածքները համեմատաբար քիչ են (անհրաժեշտ է նշել դրանք) և յերկրորդն այն, վոր այդ պատմվածքներում համարյա

ուշադրութեան չի առնված հատկապէս գյուղացիութեան տընտեսական ստրկացումը (այդ թեման շոշափող ամենացայտուն պատմվածքն է «Բուրգենիվը գլխավորապէս գրաւվում է գյուղացու անձնականով, նրա հոգեկանով և ըստ այնմ էլ դնում է անձի ազատագրման, ճորտական իրավունքի, վորպէս իրավունքի, վորպէս արժատնտեսական հարկադրանքի վոնչացման պրորբւմ, առանց ճորտատիրական կարգի, վորպէս տնտեսական սխտեմի, վոնչացման (իր տնտեսական ու քաղաքական հետեւանքների հետ):

Սրա հետ կապված պետք է նշել նաև այն հանգամանքը, վոր 1861 թվի սեփեմբերի հետո գյուղացիութեան հարցը Տուրգենևիվը (ի տարբերութեան Նեկրասովի) համարում էր լուծված. — «Ժողովուրդն ազատվեց». «Հետագայն կախված է իրենից»: Դրա հետ միասին հեղափոխական-դեմոկրատական շարժման ուժեղացումը Տուրգենևիվին ստիպում է կրակը դարձնել դեպի այդ կողմը: Արդեն «Հայրեր և դավաններ» վեպում, նկարելով Բազարովին վորպէս նոր և ուժեղ մարդու, Տուրգենևիվը վեպի ամբողջ ընթացքով ժխտում է Բազարովին. «Ան»-ը վեպում նա տալիս է հեղափոխականների չերգիծական պատկերը. «Ноль»-ը վեպում նա պայքարում է նարոչնիկական շարժման դեմ, այդ շարժումը պատկերելով մակերեսորեն և անհաջողութեան դատապարտված: Ընդունելով բուրժուական «խաղաղ» առաջնադասման երեմենտները, Տուրգենևիվը (իր խոսքերով «աստիճանական») ձգտում է զուգակցել այդ առաջնադասման հետ ազնվականական կուլտուրայի արժեքները. դրանով էլ յերևան է գալիս նրա պայքարը հանուն զարգացման «պրուսական» ճանապարհի: Լիբերալ-հաշտվողական (ազնվականութեան նկատմամբ) բնույթը Տուրգենևիվի աշխարհայացքի չերևան է գալիս նրա գրվածքների ամբողջական կոտուցվածքի մեջ, գործող անձանց և նրանց զգացումների, բընութեան, պայմանների նկարագրութեան մեջ (դրինակ. «Авосьное гнездо»). իսկ հեղափոխական դեմոկրատիայի ներկայացուցիչների նկատմամբ Տուրգենևիվը դառնում է աչլ գոչներ և աչլ նոթեր (չերգիծական — հումորական): Այստեղից էլ Տուրգենևիվի վոճի բնույթը:

Հիմնականում այդ ուղղութեամբ էլ ծավալվում է Գոնչարովի գործունեութեանը: Բայց չեթե Տուրգենևիվը գնում է, այսպէս ասած, ազնվականութեան կողմից բուրժուազիային ընդառաջ, ապա Գոնչարովի շարժումը կարելի չէ համարել հակառակն. բուրժուազիան գնում է մերձենալու ազնվականութեանը: Այստե-

ղից էլ բխում է Գոնչարովի ստեղծագործութեան առանձնահատկութեանը — ազնվականութեան և ազնվական ինտելիգենցիայի ավելի խիստ պատկերացումն, քան Տուրգենևիվը էր, բուրժուական վերածման անհրաժեշտութեան ավելի ուժեղ ընդգծումն, ավելի կապ հատկապէս բուրժուազիայի հետ: Գոնչարովն առանձնապէս սիրում է նկարել խաղաղ ու հանգիստ կենցաղի պատկերներ և վարպետորեն է նկարում այն (Աբրամով, Ագաֆիա Մատվիլովնայի կյանքը, չերագիտ Սիմբիրսկը). դեպի կենցաղն ունեցած այդ ձգտման մասին նա խոսում է իր ճանապարհորդական նկարագրութեան մեջ («Фрегат «Поллада»): Նրան հետաքրքրում են առույցայի հերոսները, առույց պայծանները, նա գեղադասում է հանգիստ ու խաղաղ բնութեանը, հանգիստ և առույց զգացումները (իհարկէ վոչ միշտ): Աչլ ձգտումն դեպի կենցաղային ուսուլիվը (առանց այնպիսի իմոցիոնալ — լիրիկական գունավորման), վոր մենք սովորաբար դիտում ենք Տուրգենևիվի մոտ) բնորոշ է հենց բուրժուական գրականութեան համար:

Սակայն Գոնչարովին չի կարելի համարել զուտ բուրժուական գրող, առանց հաշվի առնելու նրա վերջին «Одрыб» վեպում հատկապէս ցայտուն կերպով արտահայտված, նրա ազնվական համակրանքները: Չի կարելի ընդունել, իհարկէ, Պերեվիրդելի այն տեսակետը, թե Գոնչարովը գիտե և իր գրվածքների մեջ արտացոլում է միայն բուրժուազիան, թե նույնպէս Ուրտովը հանդիսանում է նահապետական բուրժուազիայի «զգեստափոխված» ներկայացուցիչը. Պերեվիրդելի ընդհանուր մեթոդոլոգիական դիրքավորումները վորոշակիորեն ձիշտ չեն, իսկ Գոնչարովի ստեղծագործութեան նման բացատրութեանը հաստատող փաստական տվյալներ չկան Գոնչարովի գրվածքներում:

Անհրաժեշտ է ընդգծել, վոր հեղափոխական-դեմոկրատական շարժման վերելքը Գոնչարովին մղում է դեպի աջ. «Одрыб» վեպում նա վոչ միայն իդեալականացնում է հին ճորտատիրական Ռուսաստանը, այլ և ուղղակի ծալում ու սեվացնում է հեղափոխական-դեմոկրատիայի ներկայացուցիչներին, գծելով Մարի Կոլտովի պատկերը:

Ավելի ամուր կապ բուրժուազիայի հետ չերևան է գալիս Ալմատրովսկու ստեղծագործութեան մեջ: Աստրովսկին հանդիսանում է հեշտութեամբ ազնվականութեանը հարող և լիբերալ ու ֆորմներից հեռու չգնացող առևտրական (գերազանցապէս) բուրժուազիայի իդեոլոգիայի արտահայտիչը: Նրա չերկերի մեջ ծավալված է «խավարի թագաւորութեան» քննադատութեանը, սակայն այդ քննադատութեանը մասնակի չէ, ձգտում է դատարար-

դի ինքնագաման միայն, նրա կուլտուրական մակարդակի բարձրացմանը: Աստրովսկու վերադերձումը դեպի ազնվականությունն ավելի խիստ է, բայց վոչ մի դեպքում էլ հասնում ազնվականական կարգերի դեմ մղվող ուղղակի պայքարի գաղափարին:

Աստրովսկու պիեսները, ավելի մեծ չափով, քան թե Գոնչարովի վեպերը, բնորոշվում են կենցաղը պատկերելու ձգտմամբ (հատկապես ընտանեկան կենցաղը) և հատկապես այդ բնագավառում Աստրովսկին նվաճեց «խավարի թագավորությունը» պատկերողի իր համբավը: Աստրովսկին հրաշալի գեղեցիկ և ցայտուն կերպով պատկերում է առևտրական կենցաղն իր բոլոր առանձնահատկություններով — մինչև անգամ տիպիկական լեզուն վոր չուրատեսակի խառնուրդ է հնի և նորի, յուրահատուկ վաճառականական առանձնահատկությունները, նրանց ձգտումը դեպի «ազնիվ» ոտարչերից բառերը և այլն: Ըստ այնմ Աստրովսկին հաճախ գերազատում է յերջանիկ, հաշտարար վախճանը («լավ է ուսման մարդը, տեսնելով իրեն բեմի վրա, ուրախանա, քան թե լաց լինի», գրում է նա իր նամակներից մեկում) և ինքն ընդունում է նահապետական-բուրժուական այն պարզ բարոյագիտությունը, վորն արտահայտվում է իր պիեսների վերնագրերի մեջ («Не так живи, как хочется», «Не в свои сани не садись», «Свои собаки грызутся, чужая не приставай», «правда хорошо, а счастье лучше» և այլն):

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1) Տուրգենևիվ. — Ընտիր չերկեր (հայերեն), Հայեր և գաղականեր. Новь. Рудин.

2) Գոնչարով. — Обыкновенная история. Обломов, лучше поздно, чем никогда.

3) Островский. — Свои люди — сочтемся. Бедность не порок, Бешеные собаки. Доходное место.

Ք Ն Ն Ա Դ Ա Տ Ա Կ Ա Ն

1. Ленин. — «Крестьянская реформа» и пролетарско-крестьянская революция (т. XV).

2. «Լենինը և արվեստը».

3. Андреев, Голубев, Коган, Ровда. — Учебник по литературе для II курса рабфаков (Тургенев, Гончарев, Астровский).

4. Коган Л. С. Очерки по истории новейшей русской литературы т. II (Тургенев, Гончаров).

Գ Ր Ա Վ Ո Ր Ի Թ Ե Մ Ա

- I 1. Տուրգենևիվի հասարակական-քաղաքական հայացքները.
2. Ճորտական իրավունքի արտացոլումը Տուրգենևիվի մոտ.
3. Տուրգենևիվը և «նիհիլիստները».
4. Տուրգենևիվը և նարոչնիկները. Տուրգենևիվի վոճը.

II 1. Ազնվականությունը և բուրժուազիան Գոնչարովի պատկերացմամբ.

2. Գոնչարովը և Տուրգենևիվը (տարբերող և միացնող գծերը).

3. Գոնչարովը ու Գոգոլը (գաղափարներն ու վոճը).

III 1. Աստրովսկու ստեղծագործության գաղափարական հիմունքները. а) վերաբերմունքը դեպի հին և նոր վաճառականությունը և նրա քննադատության բնույթը. в) Աստրովսկու պիեսների «մորալը» և այդ մորալի դասակարգային իմաստը. с) վերաբերմունքը դեպի ազնվականությունն ու չինովնիկությունը.

2. Աստրովսկու վոճը.

Ծանոթ. — ուսանողներն իրենց ընտրությամբ ներկայացնում են 1 զրավոր աշխատանք նշված հեղինակներից մեկի մասին:

Մ Ե Թ Ո Ղ Ա Կ Ա Ն Յ Ո Ւ Յ Մ Ո Ւ Ն Ք Ն Ե Ր

Մեծ մասով այդ թեմային վերաբերում են նախորդ առաջագրության մասին ասածները. այստեղ ել մեր առաջ կանգնած են վոչ թե տեսարան-հրապարակախոսներ, այլ գրողներ — արվեստագետներ: Բայց այստեղ պետք է շեշտը դնել հարցի այլ կողմի վրա. կարևոր է ցույց տալ, վոր այդ գրողներն ըստ էության հրապարակախոսներ են (վորոնց թվում է Տուրգենևիվը, վորին Պլեխանովը, վորպես «առաջ գեղարվեստագետի», հակադրում է «հրապարակախոս» Գլ. Ուսպենսկուն), Իհարկե Գոնչարովին կամ Աստրովսկուն չպիտի դարձնել տեսարաններ, բայց անհրաժեշտ է ցույց տալ, վոր իրականության արտացոլման մեջ իսկ, այն «ճշմարտության» մեջ (ավելի ճիշտը «ճշմարտություն» այն կողմի մեջ), վորը ցույց են տալիս այդ արվեստագետները, յերևան և յեկել նրանց դասակարգային ուղղվածությունը: Հարմար է այդ նպատակի համար ոգտվել տարբեր հեղինակների գրվածքների համադրություններից, վորոնք շատ կամ քիչ չափով մոտիկ են թեմայով: Որինակ Տուրգենևիվի «Записки охотника»-ի և Սալտիկով-Շչեդրինի «пешехонская старина»-ի մեջ պատկերացված է ճորտատիրական Ռուսաստանը, բայց պատկերացված է տարբեր կերպով. Տուրգենևիվի «Отцы и дети» և Չերնիշևսկու «Ինչ անել» վեպում պատկերացված են «նոր մարդիկ» (այստեղ կարելի չէ մոտենել նաև Գոնչարովի «Обрыв»-ը), բայց ելի տարբեր կերպով: Հենց այդ մոտեցումներն ել բացահայտում են հեղինակի իդեոլոգիան, նրա դասակարգային ուղղվածությունը:

ԹԵՄԱ.—ԴՈՍԱՅԵՎՍԿՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒ-
ԹՅՈՒՆԸ

Հեղափոխական շարժման վերելքը, բնականաբար առաջ-
բերեց սեփական ուժերի կատարյալ գիմագրություն: Թշնամական
վերաբերմունքը դեպի հեղափոխական-դեմոկրատական շարժումը
և բուրժուա-կապիտալիստական միապետական կարգի պաշտպա-
նությունն իրենց արտահայտությունը դառն լերկորդական վի-
պասան—հեղինակների (Պրահսկի—с збаламученное море, Լիսկով—
«Некуда» «На ножах», Կրեյտովսկի—«Кривошея» և պոետներ
(Յետ, Ալ. Տոլստոյ և մյուսները) բաղմամբով գրվածքներում:

XIX դարի խոշորագույն գրողներից Դոստայևսկին առան-
ձին տեղ է գրավում հեղափոխական դեմոկրատայի թշնամիներ-
ը մեջ: Նրա ստեղծագործությունը խիստ կերպով տարբերվում
է ազնվական գրողների (որինակ Տուրգենևի) ստեղծագործու-
թյուններից և քննության պիտի առնվի վերջին մանր-բուրժու-
ական ստեղծագործություն:

Սակայն դրա հետ միասին պիտի ընդգծել, վոր Դոստայևս-
կին ներկայացուցիչն է մանր-բուրժուազիայի սեփական մասին:
Պատճառ է հանել առնել այն հանգամանքը, վոր մանր-բուրժուա-
զիան իր վիճակի առանձնահատկության հետևանքով իր բնույ-
թով յերկակի է, ուստի և նրա մի մասը կարող է հարել գյու-
ղացիության և պրոլետարիատի հեղափոխական շարժումներին,
մյուս մասը ձգտում է դեպի իշխող դասակարգերը (դեպի խոշոր
բուրժուազիան ու կալվածատերերը): Դասակարգային պայքարի
թեթև սրվածության, շահերի վոչ բավարար դիֆերենցիացիայի
շրջանում (40-ական թ. թ.) Դոստայևսկին հարում է լիբերալ
բանակին և նույնիսկ մտնում է Պետրաշևիսկու խմբակի մեջ: Դա-
սակարգային պայքարի սրվելը և հեղափոխական շարժման վերել-
քը 60-ական թ. թ. նրան հրում է սեփական լիբերալ, վորը և
յերևան է գալիս հեղափոխական շարժման դեմ ուղղված Դոստա-

ևվսկու խոշորագույն գրվածքների մեջ («Преступление и наказание»
«Бесы», «Братья Карамазовы»):

Հարկավոր է նշել, վոր Դոստայևսկին պայքարում է հեղա-
փոխական շարժման դեմ, պայքարում է ուղղափառության, ինք-
նակալության և «ժողովրդականության» (այսինքն ազգայնու-
թյուն)՝ տնտեսական մեթոդի՝ տնտեսականության համար թե իր
հրապարակախոսական հոգվածներում («Дневник писателя») և թե իր
գեղարվեստական գրվածքներում: Գեղագետի և հրապարակախո-
սի միջև չհղած կապերի խզման Պերեկրեպիլի գրույթը (հատկա-
պես ընդգծված Դոստայևսկու նկատմամբ) տանում է դեպի Դոս-
տայևսկու ստեղծագործության սեփական նշանակության սվա-
ղումն և ակնհայտ կերպով քննադատությանը չի դիմանում: Դոս-
տայևսկու վեպերն առանձնապես սուր են դնում հեղինակի դա-
դարները (այդ մասին Դոստայևսկին հաճախ է ասել ինքը):
Դոստայևսկին պայքարում է հեղափոխական լիբերալիզմի դեմ
վոչ միայն հեղափոխականներին ուղղակի վատարանելու ճանա-
պարհով («Бесы»), այլ և այն դեպքում, չերը նա անմիջապես չի
խոսում հեղափոխականների մասին (որինակ «Преступление и нака-
зание» վեպում): Նա ձգտում է ապացուցել «միջին ուժերի» անկա-
յությունը մարդու մեջ (այստեղից նրա պսիխոլոգիզմի առանձ-
նահատկությունը, «տաղանդի կարծրությունը», հանցագործու-
թյուններն ու հոգու հիվանդագին գրույթները պատկերելու
ձգտումն), քարոզում է «տառապելու» և «հնազանդվելու» անհրա-
ժեշտություն (Մանյա Մարմելադովա, Դմիտրի Կարամազով),
ժխտում անաստվածներին և աստծու դեմ պայքարողներին (Կի-
րիլով, Իվան Կարամազով):

Այսպիսով Դոստայևսկին, չերեմն դեպի ազնվականություն-
ներն ու բուրժուազիան ունեցած իր բացասական վերաբերմունքով
հանդերձ, որչեղտվորեն դառնում է տիրող դասակարգերի և գո-
յություն ունեցող կարգի պաշտպան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դոստայևսկի—«бедные люди», «преступление и наказание», «Бесы»
կամ «Братья Карамазовы».

Ք Ն Ն Ա Դ Ա Տ Ա Կ Ա Ն

1) В. Десницкий. На литературные темы, ТИХЛ 1933 г.

2) переверзев—Литературная энци. т. 3 (քննադատելու համար):

ԹԵՄԱ.—ՇԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՆԱՐՈՂՆԻԿՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վաթսուսական թվականների գրողները նարոդնիկներ չեն լինել խոսքի իսկական առումով (տես. Լենինի «От какого наследства мы отказываемся» հոդվածը)։ Իսկական նարոդնիկությունը ձևակերպվեց 60-ական թվականների յերկրորդ կեսին և հատկապես 70-ական թվականներին։

Հեղափոխական նարոդնիկության խոչորագույն ներկայացուցիչներն էին գրականության մեջ Գլխի Ուսպենսկին և Նա նարոդնիկական հայացքներին հանգեցրեց Վոլ Դեմիտրևիչը, իր ավելի վաղ գրվածքներում որինակ «Нравы растеряемой улицы» ակնարկներում նա գրավում է Վոլ թե գլուղով, այլ քաղաքով։ Հետագայում էլ նա նարոդնիկներից առանձնանում է իր հայացքների զգուստությունով, գլուղացիական կյանքն ըմբռնելու սուր կարողությունով։ Նրա գրվածքներում ցույց է տրված նաև կապիտալիզմը, նա տեսնում է նույնպես գլուղի շերտավորումը (ինչպես տեսնում էր Մալտիկովը), տեսնում է գլուղական ալդ շերտավորումը՝ դերձ պահել ցանկացող համայնքի անկորությունը։

Բայց տեսնելով և ցույց տալով այդ յերևույթը, Գլխի Ուսպենսկին աչնում և աչն համոզմանով, Վոլ գլուղացիության մեջ կա հատուկ ուժ («власть земная»), Վոլը գլուղացիներին կարող է փրկել բոլոր թշվառություններից, մասնավորապես կապիտալիզմի չարիքներից և տանել նրան դեպի սոցիալիստական գալիքը։ Այստեղից էլ Գլխի Ուսպենսկու հատուկ ուշադրությունը դեպի գլուղացիությունը, դեպի գլուղը, այստեղից էլ «հողի իշխանություն» («власть земли») իդեալիզացիան (անողորմ ու ամենաքննադատական մոտեցում ունենալով դեպի իրականությունը)։ Գլ. Ուսպենսկու հեղափոխական ուղղությունը պարզ չերևան է գալիս դեպի լիբերալներն ունեցած թշնամական վերաբերմունքից, նրա ու լիբերալ նարոդնիկության ներկայացուցիչներին—Ջլատովրատսկու նմանների—համադրությունից, Վոլը

(Ջլատովրատսկին, Ն. Գ.) «Էլարիերի» իդեալիզացիայով հանգում է գլուղի մեղմ, հովվերգական պատկերացմանը։

Անհրաժեշտ է ընդգծել Գլ. Ուսպենսկու ստեղծագործությունն ըմբռնման խնդրում Պլեխանովի թույլ տված սխալը։ Պլեխանովը նարոդնիկության մ. շ տեսնում է «սոցիալիստիկ ինտելիգենցիայի» և Վոլ թե գլուղացիության շահերի արտահայտություն, նարոդնիկական շարժումը համարում է զուտ ռեակցիոն, ռեակցիոն սոցիալիստական ուսույթի հետևում չտեսնելով հեղափոխական-դեմոկրատական կորիզը։ Պլեխանովը Գլ. Ուսպենսկուն, ինչպես և Նեկրասովին, չափում է ազնվական գրողների չափանիշով և հանգում այն լեզրակացություն, Վոլ նրա գրվածքները քիչ են գեղարվեստական՝ չտեսնելով նոր դասակարգին հատուկ գեղարվեստականության նոր սիստեմը։

Գլ. Ուսպենսկին, իհարկե, այլ տիպի արվեստագետ է, քան Տուրգենևը—գրանում իրավացի չե պլեխանովը (այդ ճանաչել և ընդգծել է Ուսպենսկին ինքն էլ)։ Ճիշտ է և այն, Վոլ Ուսպենսկին չիրեքնի դիմում է իր մտքերի անմիջական—հրապարակախոսական շարադրանքին, չափանալիզելով գեղարվեստական պատկերների ցուցադրումով։ Սակայն այդ չի նշանակում, թե Ուսպենսկու գրվածքներում բացակայում է արվեստը, չե Վոլ Տուրգենև էլ իր «Война и мир» վեպում դիմում է իր փիլիսոփայական հայացքների ուղղակի շարադրանքին՝ չբալականանալով գեղարվեստական պատկերների միջոցով այն արտահայտելով։

Ուսպենսկին գրավում է Վոլ թե անձնական անհատականության վերադրումներով, այլ առանձին անհատների վիճակի մեջ յերևան չկող հասարակական փոխարարություններին մեխանիկալով։ Այդ նպատակի համար էլ նա ընտրում է ակնարկի (ոչնրկի) և Վոլ թե «Событие»-ի նման ծանրակշիռ վեպերի ձևը։ Դեպի հասարակական յերևույթներն ունեցած հետաքրքրությունը թուլացնում է դեպի բնությունը (Վոլին նա սիրում է և կարողանում է պատկերել, ինչպես ցույց է տալիս Կոլցովի և Լեմոնտովի բանաստեղծությունների նրա համեմատական քննարկությունը, ինչպես և բնություն հաղվադեպ պատկերները նրա ակնարկներում), մասնավորապես դեպի ինտիմ հոգեբանությունը, սիրային վերադրումները, Վոլը և Վոլ սովորաբար կառուցում էր իր վեպերն ու պատմվածքները Տուրգենևին։

Դրա փոխարեն կյանքի իր ընտրած բնագավառը վարպետորեն է նկարում Ուսպենսկին, նա տալիս է գլուղացիների (որ. Իվան Բոսիլը, Իվան Յեմելյայիվիչը և մյուսները), կապիտա-

լիտաների (սրինակ «Книжка чехов» ակնարկում), գլուղական ինտելիգենտների և ազնվականների («Чудак барин» և այլն) կենդանի պատկերներ. նա կարողանում է կենդանացնել մինչև անգամ վիճակագրական տվյալները («Живые цифры»), Հրաշալի կերպով Ուսպենսկին բնորոշում է իր պատկերած անձանց խոսվածքն իր բոլոր առանձնահատկություններով, կարողանում է ստեղծել պաշտոն և արտահայտիչ բանաձևեր (ֆորմուլաներ)՝ չափազանց հարուստ բովանդակությամբ (նման որինակ, «Не суйся» անկղ նախագուշացման և այլն):

Գլխից Ուսպենսկին չեղավ նարոդնիկության ամենախոշոր ներկայացուցիչը լեզու գրականության մեջ: Պետք է նշել, վոր նարոդնիկներն ստեղծեցին նաև բովանդակ հարուստ անկղալ գրականություն, մասնավորապես ագիտացիոն—պրոպագանդիստական բնույթի: Այդպիսի գրվածքների հեղինակների շարքում կարելի է անվանել Ստեպյակ—Կրավչինսկուն (որինակ՝ նրա «Сказка о копейках»-ն ոգտվում էր բավական զգալի հասարակայնությանը): «Андрей Кожухов» վեպում (լույս տեսած արտասահմանում անգլերեն լեզվով, և նախապես արևմտաեվրոպական ընթերցողների համար նախատեսված) Ստեպյակ—Կրավչինսկին լինելով տեղորոշական շարժման ակտիվ մասնակից, տալիս է 70-ական թվականների հեղափոխական շարժման գունեղ պատկերացում: Առանձնապես հետաքրքիր է այդ պատկերացումը համեմատել լիբերալ Տուրգենևի հեղափոխական շարժման պատկերացման «Ноль» և ռեակցիոն Դոստոյևսկու («Бесы») հետ. մենք վերջապես տեսնում ենք, թե ինչպես տարբեր գրողներ տարբեր ձևով են տեսնում ու պատկերում մոտավորապես նման յերիվույթները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գլխից Ուսպենսկի—Власть земли: крестьянин и крестьянский труд: живые цифры: «Книжка чехов»:

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

1. Լենին—От какого наследства мы отказываемся (Собр. сочин., т. II). Экономическое содержание народничества (т. I)
2. Глоголев—Гл. Успенский и народничество («РАпп», 1931 г. № 2)
3. Պլեխանով—Գլ. Ուսպենսկի (X հատոր):

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Նարոդնիկական գրականության այս թիման առանձնացված է, նկատի առնելով նրա սկզբունքային նշանակությունը: Այստեղ կարևոր է, նախ գրական լեզվի վերածել նարոդնի-

կության լենինյան ըմբռնումը (հակադրելով Պլեխանովի և մյուս մենշևիկների, ինչպես և արոցկիստների ըմբռնմանը), չերկրորդն ընդգծել Ուսպենսկու գրական սխառմի առանձնահատկությունն ու ցույց տալ (չընկնելով չափազանցությունների մեջ, Ուսպենսկուն չդարձնելով դեղարվեստականության միակ որինակ) նրա գեղարվեստականությունը:

Աշխատանքի հիմքում պիտի դնել Լենինի նշված հոգվածները: Ուսպենսկու ստեղծագործությունն ըմբռնելու համար պետք է առանձն ուշադրության տանել Լենինի այն ցուցումը, վոր նարոդնիկները լավ տեսնում էին փաստերը, բայց չէին կարողանում հասկանալ նրանց նշանակությունը, չէին կան բողանում բացատրել այդ փաստերը: Հատկապես այդպես պիտի բնութագրել Գլ. Ուսպենսկու ստեղծագործությունը:

Աղբյուրները բավականաչափ լրիվ և ճիշտ են լուսաբանում Ուսպենսկու ստեղծագործության սոցիալական էությունը: Պլեխանովի հոգվածի նկատմամբ պիտի լինել քննադատող:

ԹԵՄԱ. — ՏՈԼՍՏՈՅԻ ՍՏԵՂԵԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Լենինի հորվածները Տոլստոյի մասին պիտի հիմք ել դառնան Տոլստոյի ստեղծագործության ուսումնասիրության համար, վորոնք պարզում են Տոլստոյի ստեղծագործության հետ կապված բոլոր հիմնական խնդիրների ելությունը:

Հատուկ ուշադրություն պիտի դարձնել Տոլստոյի 80-ական թվականներին «Կրիզիսի» ելության բացատրության վրա, վորպես անցումն ազնվական դիրքերից դեպի նահապետական գյուղացիության դիրքերը՝ ավելի և ավելի աճող դասակարգային հակասությունների ազդեցությամբ: 50—60-ական թվականներին Տոլստոյը ձգտում է պաշտպանել ազնվականական դիրքերը, վորոնում ազնվականության և գյուղացիության շահերի ներդաշնակություն: Բայց արդեն այդ շրջանում մի կողմից նա քննադատության է լինիթարկում գոյություն ունեցող իրականության վորոշ կողմեր («Севостопольские очерки», «Люцерн», «холстомер»), մյուս կողմից — յերևան է բերում թերահավատ վերաբերմունք դեպի ազնվականության ներկայացուցիչներին ու «Ժողովրդի» շահերի միաձուլման, մտեցման իրագործումը («Утро помещика», «Казак», հետո «Анна каренина»):

Արդեն առաջին շրջանում նկատվում է կրոնական գունավորում Տոլստոյի աշխարհայացքի մեջ («Детство, отрочество и юность», «Война и мир», «Севостопольские очерки», «Люцерн») և պասսիվությունը փառաբանելու ձգտումն («Война и мир»): Այսպիսով, արդեն 50—60-ական թվականներին Տոլստոյի մոտ կան բազմաթիվ ելեմենտներ, վորոնք հետագայում ստանում են ավելի լրիվ արտահայտություն: Վերջինս սրվում են շահերի հակասությունները գյուղացիության և ազնվականության միջև, վորքան սրվում է պաշարը, այնքան էլ ավելի անհրաժեշտ է դառնում ընտրությունը, և Տոլստոյը կատարում է այդ ընտրությունը՝ ճորտատիրական լծից և նրա մնացորդներից, ինչպես և զարգացող կապիտալիզմից սուլժող նահապետական գյուղացիության ոգտին:

Այստեղից էլ և կապիտալիզմի, և կալվածահողատիրության քննադատությունը Տոլստոյի մոտ. այստեղից էլ կառավարական ապարատի, վորպես ճնշման և հարկադրանքի ապարատի, գիտության ու արվեստի, պաշտոնական լեկեղեցու և լեկեղեցականության քննադատությունը: Սակայն գյուղացիության առեղծվածությունն ու տառապանքն արտահայտող իր քննադատության մեջ ուժեղ և հատուկ Տոլստոյը չի կարողանում կերտել դրական գաղափարներ, չի կարողանում նշել դեպի լավագույն կյանքը տանող ուղիներ — այս և նրա ուսմունքի թուլլ կողմը:

Նա ժխտում է վոշ միայն բռնության գործադրումը շահագործողների կողմից, այլ և բռնությունն ընդհանրապես, ներառյալ նաև հեղափոխական պայքարը: Նա քարոզում է չհակադրվել չարին, քարոզում է «մաքուր» և պարզ կրոն՝ «առանց տերտերների»: Սրա մեջ արտացոլում է գյուղացիության մասսայական շարժման թուլությունը, քանի դեռ այդ չի գլխավորում պրոլետարիատը:

Տոլստոյը յեզակի յե իր հակասություններով. հնարավոր չե անջատել նրա փիլիսոփայական և հրապարակախոսական հոգևածները գեղարվեստական գրվածքներից: Չափազանց վարպետորեն և նա իր վեպերն ու պատմվածքները հագեցնում իր դիրքավորումներով: Կենցաղի ցուցադրումը, բնության նկարագրությունը, պատկերների գծագրությունը, հերոսների հոգեբանության դրսևվորումը — բոլոր միջոցները մոբիլիզացիայի յե յենթարկում Տոլստոյը՝ վորոշ ուղղությամբ ընթերցողի վրա ներգործելու համար: Անհրաժեշտ է առանձնապես ընդգծել այդ փաստը, քանի վոր քննադատական գրականության մեջ հաճախ խիստ սահման են գծում Տոլստոյ-փիլիսոփայի և Տոլստոյ-գեղագետի միջև (ալգպիսի սահմանագիծ է անցկացնում, որինսկ, Պլեխանովը, բոլորովին չբացահայտելով Տոլստոյի, վորպես գյուղացիական շարժումն արտացոլող ուսմունքի և ստեղծագործության ելությունը):

Գրականություն

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

I. Տոլստոյ. Детство, отрочество, и юность. утро помещика. Казаки. Воскресенье. Война и мир. Что такое искусство? О шекспире и о драме.

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

1. Լենին. — Տոլստոյի մասին («Լենինը և արվեստը»).
2. Коган п. С. — Очерки по истории новейшей русской литературы,
3. Глаголев. — Ленин и Плеханов о Толстом («На лит. посту», № 20, 21

23, 93, г.

Տոլստոյին նվիրված և հատուկ ուշադրութուն մի կողմից նրա ստեղծագործության համաշխարհային նշանակության և մյուս կողմից ել այդ սխտեմի մեթոդությունների կարևորություն ունենալու պատճառով: Տոլստոյի մասին մենք ունենք Լենինի վեց հոգվածները և դրանք ուշադիր կերպով պետք է մշակել— վնճ միայն այն չափով, վոր չափով դրանք վերաբերում են Տոլստոյի ստեղծագործությանը, վորքան ընդհանուր մեթոդությունների գրվածքով: Կարևոր է հասկանալ, թե ինչպիսի է Լենինն այս կամ այն հեղինակի ստեղծագործության բնութագիրը տալիս (պատմական կոնկրետ անալիզ, վորոշակի դասակարգային բնութագիր, «ուսմունքի» և «ստեղծագործության» միասնություն, մի դասակարգի դիրքերից մյուսի դիրքերն անցնելու պրոբլեմ, պատմական և միաժամանակ արդիականություն համար ունեցած նշանակությունը, ստեղծագործության մեջ իրականության արտացոլման ուսմունքը): Դժբախտաբար դեռ չկա պատմական-գրական այնպիսի աշխատանք, վորը լինիյան բնութագրի հիման վրա տար Տոլստոյի ստեղծագործության մասնաճանաչ վերլուծումը:

ԳՐԱՎՈՐԻ ԹԵՄԱ.

1. Տոլստոյի իդեոլոգիան— a) վերաբերմունքը դեպի հասարակական-տնտեսական կարգը (ճորտատիրությունը, կապիտալիզմը, սոցիալիզմը). b) վերաբերմունքը դեպի պետությունն ու հեղափոխական պայքարը, c) վերաբերմունքը դեպի կոիվը, դատարանը, յեկեղեցին ու կրոնը, d) վերաբերմունքը դեպի արվեստն ու կուլտուրան:

2. Տոլստոյի ստեղծագործական ուղին («Детство»-ից «Հարությունը») և 80-ական թվականներին նրա ստեղծագործության մեջ տեղի ունեցած բեկման դասակարգային ելությունը:

3. «Տոլստոյականությունը» և նրա դեմ պայքարելու անհրաժեշտությունը:

(Խնդիրները պետք է հիմնավորել Տոլստոյի խոշոր գործերից մեկի՝ «Война и мир»-ի, «Հարությունի»-ի կամ «Анна Каренина»-ի վերլուծմամբ):

Ծանոթություն. Ռուսերեն գլխատառեր չլինելու պատճառով մի շարք տեղեր հեղինակների և աշխատությունների անունները հատարակ տառերով և տպագրված:



9896/1